**Լրամշակված նախագիծ**

**Երկրորդ ընթերցում**

**Կ-693-30.10.2023-ՊԻ-011**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** 2018 թվականի փետրվարի 9-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 17-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 17. Դատական վարույթի հրապարակայնությունը**

1. Դատարանում գործը քննվում է դռնբաց դատական նիստում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

2. Դատավարության մասնակիցների մասնավոր կյանքի, ներառյալ՝ առևտրային գաղտնիքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ դատական վարույթը կամ դրա մի մասը կարող է անցկացնել դռնփակ:

3. Դատական վարույթը կամ դրա մի մասը դռնփակ անցկացնելու հարցը լուծվում է դռնփակության պայմաններում:

4. Դատական վարույթը կամ դրա մի մասը դռնփակ անցկացնելու մասին դատարանը կայացնում է որոշում:

5. Դռնփակ դատական նիստում գործի քննությունն իրականացվում է սույն օրենսգրքով սահմանված կանոնների պահպանմամբ: Դատական վարույթը կամ դրա մի մասը դռնփակ նիստում քննելու դեպքում դատական նիստին իրավունք ունեն ներկա լինելու դատական նիստերի քարտուղարը, գործին մասնակցող անձինք, նրանց ներկայացուցիչները, դատական կարգադրիչները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վկան, փորձագետը, մասնագետը և թարգմանիչը: Նշված անձինք դատարանի կողմից ստորագրություն վերցնելու միջոցով նախազգուշացվում են օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունները չհրապարակելու և սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու համար պատասխանատվության մասին:

6. Դռնփակ դատական նիստում տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառումն արգելվում է:

7. Դատարանի՝ եզրափակիչ, իսկ սույն օրենսգրքով կամ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ նախատեսված դեպքերում նաև այլ դատական ակտերը հրապարակվում են դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

8. Դատական վարույթը կամ դրա մասը դռնփակ անցկացնելու դեպքում դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվում է եզրափակիչ դատական ակտի եզրափակիչ մասը, բացառությամբ այն դեպքերի, երբ այն պարունակում է օրենքով պահպանվող գաղտնիք: Եզրափակիչ դատական ակտի՝ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող եզրափակիչ մասը հրապարակվում է դռնփակ նիստում:

9. Դատական վարույթը կամ դրա մի մասը դատարանի որոշմամբ դռնփակ անցկացնելու դեպքում տվյալ գործի հետագա քննությունն այլ դատական ատյաններում կատարվում է դռնփակ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ որոշում է կայացնում գործի քննությունը դռնբաց իրականացնելու վերաբերյալ:»:

***Հոդված 2.*** Օրենսգրքի 26-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 26. Ընդդատության և ենթակայության մասին վեճերը**

1. Գործն ըստ տարածքային ընդդատության կամ սնանկության դատարանից ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:

3. Հակակոռուպցիոն դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում դատարանից ըստ ենթակայության ստացած գործը վարույթ ընդունելու կամ այն Վճռաբեկ դատարանին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում հակակոռուպցիոն դատարանից ըստ ենթակայության ստացած գործը վարույթ. ընդունելու կամ այն Վճռաբեկ դատարանին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:

4. Սույն հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված դեպքերում, դատավորը ենթակայության հարցի որոշման համար գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին կայացված որոշումը ուղարկում է գործին մասնակցող անձանց, ովքեր այն ստանալու պահից եռօրյա ժամկետում կարող են գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

5. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում՝ Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրվում է նիստ՝ իր, և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացնելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով:»:

***Հոդված 3.*** Օրենսգրքի 27-րդ հոդվածում՝

1) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Վճռաբեկ դատարանում վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու, վճռաբեկ բողոքը վերադարձնելու, վճռաբեկ բողոքի ընդունումը մերժելու, վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու հարցը լուծվում է նիստին ներկա դատավորների ձայների ընդհանուր թվի մեծամասնությամբ, իսկ վճռաբեկ բողոքը քննվում է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի, իսկ հակակոռուպցիոն պալատում՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության դատական կազմի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ:».

2) 11-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Հատուկ կարծիքը հրապարակվում է դատական ակտի հրապարակումից հետո տասնօրյա ժամկետում:»:

***Հոդված 4.*** Օրենսգրքի 29-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Գործի քննությունը կարող է ընդհատվել, իսկ դատական նիստի ընթացքում ինքնաբացարկ կամ բացարկ հայտնելու դեպքում նիստը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան երեք օրով:»:

2) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Դատավորն ինքնաբացարկի կամ բացարկի հարցը քննելու արդյունքով կայացնում է որոշում, որում շարադրվում են ինքնաբացարկի կամ բացարկի հիմքերը: Դատարանի որոշումը հանձնվում կամ ուղարկվում է գործին մասնակցող անձանց ոչ ուշ, քան այն կայացնելու հաջորդ օրը:»:

***Հոդված 5.*** Օրենսգրքի 37-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին և 1.2-րդ մասերով.

«1.1. Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի հայցադիմումը ներկայացվում է, վարույթ է ընդունվում, հայցադիմումի ընդունումը մերժվում է կամ հայցադիմումը վերադարձվում է հայցադիմումին վերաբերող սույն օրենսգրքով նախատեսված կարգով:»:

«1.2. Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի հայցադիմումը առաջին ատյանի դատարանն ընդունում է վարույթ, եթե՝

1) պահանջը ներկայացվել է վեճի առարկայի նկատմամբ,

2) հայցի և գործով քննվող պահանջների համատեղ քննությունը կարող է ապահովել գործի առավել արագ և արդյունավետ լուծումը:»:

***Հոդված 6.*** Օրենսգրքի 38-րդ հոդվածում.

1) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությունով.

«Եթե հասցեատիրոջը ուղարկված ծանուցումը վերադարձվում է դատարան կամ որևէ այլ պատճառով հասցեատերը այն չի ստանում, ապա ծանուցումը իրականացվում է սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի սահմանված կարգով:».

2) լրացնել նոր 7.1.-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«7.1. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով ծանուցված անձինք իրավունք ունեն ծանոթանալու գործի նյութերին, ստանալու դրանց պատճենները, գործի նյութերից անելու քաղվածքներ, լուսանկարներ, լուսապատճեններ և պատճեններ, բացառությամբ այն դեպքերի, երբ գործի նյութերը պարունակում են օրենքով պահպանվող գաղտնիք:»:

***Հոդված 7.*** Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի «կողմն» բառը փոխարինել «գործին մասնակցող անձն» բառերով:

***Հոդված 8.*** Օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասը «նախատեսված» բառից հետո լրացնել «և օրենքով սահմանված այլ» բառերով:

***Հոդված 9.*** Օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-րդ մասը «և այլն)» բառերից հետո լրացնել «, բացառությամբ այն դեպքերի, եթե նշված անձը գործի քննությանը մասնակցում է որպես հակադիր շահեր ունեցող կողմ» բառերով:

***Հոդված 10.*** Օրենսգրքի 97-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին մասով.

«4.1. Դատական ծանուցագիրը հեռախոսակապի (այդ թվում՝ տեքստային հաղորդագրության) կամ էլեկտրոնային հարթակով (ինտերնետային կայքով, էլեկտրոնային հավելվածով կամ համանման այլ միջոցներով) ուղարկելը կամ այդ մասին հաղորդելը հնարավոր է, եթե կողմն ինքն է դատարանին այդ նպատակով տրամադրել իր հեռախոսահամարը կամ էլեկտրոնային հասցեն: Այդ դեպքում նշված հեռախոսահամարին կամ էլեկտրոնային հասցեին ուղարկված կամ հաղորդած ցանկացած տեղեկություն համարվում է ընդունված կամ ստացված հասցեատիրոջ կողմից: Հեռախոսակապի միջոցով իրականացված ծանուցումը պատշաճ է համարվում, եթե առկա է դատական ծանուցագրի հաղորդագրությունն ուղարկելու և այն հասցեատիրոջ կողմից ստացվելու փաստը հաստատելու հնարավորություն, իսկ հեռախոսային խոսակցության դեպքում՝ դրա բովանդակության մասին ձայնագրություն: Ծանուցման նման եղանակի կիրառման մասին վկայող նյութերը կցվում են գործին:»:

***Հոդված 11.*** Օրենսգրքի 102-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «հայց ներկայացնելու համար» բառերը:

***Հոդված 12.*** Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում՝ գրավոր միջնորդության տեսքով: Նման պահանջից հրաժարվելու կամ այդ կարգը չպահպանելու դեպքում դատական ծախսերի հատուցման հարցը համարվում է լուծված:»:

***Հոդված 13.*** Օրենսգրքի 109-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մասով.

«9. Ներկայացված առանձին հայցապահանջների նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու հիմքերի առկայության դեպքում, եթե դատարանն այդ մասով առանձնացնում է գործի

վարույթը և առանձնացված մասով կայացնում է հայցը մերժելու մասին վճիռ, ապա նշված վճռում դատարանը կարող է նշում կատարել դատական ծախսերի հարցին առանձնացված գործով կայացվելիք եզրափակիչ դատական ակտով անդրադառնալու մասին:»:

***Հոդված 14.*** Օրենսգրքի 110-րդ հոդվածի 3-րդ մասում «անդրադառնում են» բառերը փոխարինել «իրավունք ունեն անդրադառնալու» բառերով:

***Հոդված 15.*** Օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին մասում «Առաջին ատյանի դատարանը» բառերը փոխարինել «Դատարանը» բառով:

***Հոդված 16.*** Օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասը «վերադարձնելու հիմքերը» բառերից հետո լրացնել «իսկ սույն Օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված անվերապահ բեկանման հիմքերից որևէ մեկով հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը վերացվելու դեպքերում առաջին ատյանի դատարանը հայցադիմումն ընդունում է վարույթ, եթե բացակայում են հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը» բառերով:

***Հոդված 17.*** Օրենսգրքի 127-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի՝

ա.10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) հակընդդեմ հայցադիմումը չի համապատասխանում սույն օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին կամ 3-րդ մասով սահմանված պահանջներին»:

բ.12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12) վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձը հայցադիմումը ներկայացրել է սույն օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին, 1.1.-ին և 1.2-րդ մասերով սահմանված պահանջների խախտմամբ.».

գ. 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14) հայցադիմումը ներկայացվել է այն ներկայացնելու օրվա դրությամբ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցող գումարի բռնագանձման պահանջով, որը ենթակա է քննության նոտարի կողմից, և առկա չէ

ա. նոտարի կողմից նույն պահանջով գումարի բռնագանձման կարգադրություն արձակվելու վերաբերյալ դիմումը մերժելու մասին որոշում, բացառությամբ «Նոտարիատի մասին» օրենքի 82.9-րդ հոդվածի 1.1.-ին մասով նախատեսված հիմքով դիմումը մերժելու դեպքի կամ,

բ. նոտարի կողմից նույն պահանջով կարգադրությունը չեղյալ ճանաչվելու վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշում:»:

2) 1.3.-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.3. Սույն հոդվածի 1.1-ին մասում նշված թերությունները չվերացվելու կամ հայցադիմումը վերադարձնելու այլ հիմքերի առկայության դեպքում առաջին ատյանի դատարանը սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում հայցադիմումը վերադարձնելու մասին:

3) 4-րդ մասի՝

ա. «և 10-12-րդ» բառերը փոխարինել « 10-12-րդ և 14-րդ» բառերով.

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Կրկին ներկայացված հայցադիմումում նույն խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ խախտումները վերացնելու հնարավորությունից հայցվորը զրկված էր իր կամքից անկախ պատճառներով:»:

4) 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությունով.

«Եթե հայցադիմումը վերադարձնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը բողոքարկված լինելու պայմաններում հայցադիմումը կրկին ներկայացվել է դատարան, ապա առաջին ատյանի դատարանը կրկին ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու հարցի վերաբերյալ որոշում է կայացնում վերաքննիչ դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման վերաբերյալ դատական ակտ կայացնելուց հետո:»:

5) 6-րդ մասը 1-ին նախադասության «մերժելու հիմքերը» բառերից հետո լրացնել «, իսկ սույն Օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված անվերապահ բեկանման հիմքերից որևէ մեկով հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը վերացվելու դեպքերում առաջին ատյանի դատարանը հայցադիմումն ընդունում է վարույթ, եթե բացակայում են հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը» բառերով:»:

***Հոդված 18.*** Օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասը «գործին մասնակցող անձի միջնորդությամբ» բառերից հետո լրացնել «կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իր նախաձեռնությամբ» բառերով:

***Հոդված 19.*** Օրենսգրքի 131-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին մասով.

«5.1. Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելուց հետո ներկայացվելու և դատարանի կողմից բավարարվելու դեպքում՝ հայցի ապահովման միջոց կիրառելու կամ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մասնակի բավարարելու մասին դատարանի որոշումը ուղարկվում է պատասխանողին և գործին մասնակցող այլ անձանց հայցի ապահովման մասին դատարանի որոշումը կատարելուց հետո՝ եռօրյա ժամկետում:»:

***Հոդված 20.*** Օրենսգրքի 134-րդ հոդվածում 2-րդ մասի 1-ին կետը «բացակայում են» բառերից հետո լրացնել «կամ վերացել են» բառերը:

***Հոդված 21.*** Օրենսգրքի 135-րդ հոդվածի 6-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությունով.

«Հայցագնի չափով գույքի վրա արգելանք դնելու մասին հայցի ապահովման միջոց կիրառված լինելու դեպքում դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կայացնում է հայցի ապահովման միջոցը մասնակի վերացնելու մասին որոշում՝ հակընդդեմ ապահովման չվճարված գումարի չափով:»:

***Հոդված 22.*** Օրենսգրքի 140-րդ հոդվածի 4-րդ մասը «իրենից անկախ պատճառներով» բառերից հետո լրացնել «կամ հակընդդեմ հայց չի ներկայացվել ընտանեկան գործերով վարույթի ընթացքում» բառերով:

***Հոդված 23.*** Օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասը «հետևանքները» բառից հետո լրացնել «բացառությամբ սույն օրենսգրքի 183-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերի» բառերով:

***Հոդված 24.*** Օրենսգրքի 152-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասի՝

ա. «օրենսգրքի» բառը փոխարինել «հոդվածի» բառով.

բ. «չի քննարկվում» բառերից հետո լրացնել «, որի մասին միջնորդությունը ներկայացրած անձը տեղեկացվում է ոչ ուշ, քան հաջորդ օրը:» բառերը:

2) 6-րդ մասում՝

ա. «արգելվում է» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն Օրենսգրքի 170-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքի» բառերը:

բ. 2-րդ նախադասությունում «հիմքով» բառից առաջ լրացնել «փաստական» բառը.

գ. «չի քննարկվում» բառերից հետո լրացնել «, որի մասին միջնորդությունը ներկայացրած անձը տեղեկացվում է ոչ ուշ, քան հաջորդ օրը» բառերը:»:

***Հոդված 25.*** Օրենսգրքի 153-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Տուգանք կիրառելիս կամ գործին մասնակցող անձին դատական նիստերի դահլիճից հեռացնելիս արտահայտվելու իրավունք չտրամադրելը դատարանը պետք է պատճառաբանի այդ անձի ներկայությամբ, եթե առկա է դրա հնարավորությունը, կամ այդ անձի բացակայությամբ:»:

***Հոդված 26.*** Օրենսգրքի 156-րդ հոդվածի

1) 1-ին մասի՝

ա) 6-րդ կետի «պատասխանողը» բառը փոխարինել «գործին մասնակցող անձը» բառերով.

բ) 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) առաջին ատյանի դատարանը որոշել է գործի քննությանը ներգրավել գործին մասնակցող նոր անձի կամ սույն Օրենսգրքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ծանուցել որևէ անձի.».

գ) 14-րդ կետի «դեպքում» բառը փոխարինել «կամ սույն Օրենսգրքով սահմանված դատավարական գործողությունները կատարելու անհրաժեշտության դեպքերում» բառերով.

2) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Սույն հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքում գործի քննությունը հետաձգելու գործողությունը կարող է կատարվել դատական նիստից դուրս»:

***Հոդված 27.*** Օրենսգրքի 157-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 1-ին կետի «ակտ կայացնելը» բառերը փոխարինել «ակտի օրինական ուժի մեջ մտնելը» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի հիմքով գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը դատարանը կայացնում է Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշման հետ միաժամանակ:»:

***Հոդված 28.*** Օրենսգրքի 158-րդ հոդված լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված դատավարական գործողությունները կատարելու համար դատարանի նախաձեռնությամբ, հավելյալ պարզաբանումներ ստանալու նպատակով, կարող է հրավիրվել դատական նիստ, որի ժամանակի և վայրի մասին ծանուցվում են գործին մասնակցող անձինք:»:

***Հոդված 29.*** Օրենսգրքի 159-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասից հանել «, կամ երբ տեղի է ունեցել դատական կազմի փոփոխություն, և գործը վարույթ է ընդունել նոր դատավորը» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մաս.

«2.1. Դատական կազմի փոփոխության և գործը նոր դատավորի կողմից վարույթ ընդունվելու պարագայում այդ գործի կասեցված վարույթը կարող է վերսկսվել:»:

3) 4-րդ մասը«հայցվորին,» բառից հետո լրացնել «(դիմողին)» բառերով:

***Հոդված 30.*** Օրենսգրքի 168-րդ հոդվածը՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1.-ին մասով.

«2.1. Եթե գործին մասնակցող անձը կամ նրա ներկայացուցիչը չի ներկայացել դատական նիստին, ապա դատարանը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված գործողությունները կատարելուց հետո՝ երեք օրվա ընթացքում, գործին մասնակցող անձանց ծանուցում է այդ մասին:»:

2) 7-րդ մասում 3-րդ նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն.

«Գործի քննության արդյունավետությունից ելնելով դատարանը կարող է դատական ծախսերի հարցին անդրադառնալ վեճն ըստ էության լուծող եզրափակիչ դատական ակտով:»:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մաս.

«8. Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգը դատարանի հայեցողությամբ կարող է չկիրառվել, եթե դա բխում է գործի քննության արդյունավետությունից կամ գործին մասնակցող անձինք համաձայն են, որ հայցային վաղեմության հարցին դատարանն անդրադառնա գործի ըստ էության քննության արդյունքում կայացվելիք եզրափակիչ դատական ակտով:»:

***Հոդված 31.*** Օրենսգրքի 170-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մաս.

«7. Հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը դատարանը չի քննարկում, եթե չի ներկայացվել օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից, իսկ այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումից ազատելու, դրա վճարումը հետաձգելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա բացակայում է դրա վերաբերյալ միջնորդությունը, կամ դատարանն այն չի բավարարել:»:

***Հոդված 32.*** Օրենսգրքի 173-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությունով.

«Նոր պատասխանող ներգրավելու միջնորդության մեջ պետք է նշվեն նոր պատասխանող ներգրավելու հիմքերը և հիմնավորումները:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասի պահանջները չպահպանելու դեպքում ներկայացված միջնորդությունը չի քննարկվում:»:

***Հոդված 33.*** Օրենսգրքի 180-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «Առաջին ատյանի դատարանը» բառերը փոխարինել «Դատարանը» բառով,

2) 1-ին մասի 11-րդ կետը «շարունակելու վերաբերյալ» բառերից հետո լրացնել «, բացառությամբ այն գործերի, որոնցում սկզբնական հայցի հետ համատեղ քննվում է նաև հակընդդեմ հայց» բառերը:

3) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-րդ կետով.

«12) օրենքով նախատեսված այլ դեպքերում:»:

***Հոդված 34.*** Օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասից հանել «Առաջին ատյանի» բառերը, և «դատարանը» բառը փոխարինել «Դատարանը» բառով:»:

***Հոդված 35.*** Օրենսգրքի 183-րդ հոդվածի՝

1) 1-ին մասից հանել «առաջին ատյանի» բառերը:

2) 4-րդ մասը «վերաքննիչ» բառից հետո լրացնել «կամ վճռաբեկ» բառերով:

3) 7-րդ մասը «մեկ այլ դատավորի» բառերից հետո լրացնել «կամ դատարանի կազմի» բառերով:

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ մասով

«10. Սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգը չի կիրառվում այն դեպքերում, երբ պահանջներից հրաժարվելու միջնորդությունը ներկայացնում է իրավաբանական անձը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ որպես ներկայացուցիչ փաստաբան ունեցող ֆիզիկական անձը:»:

***Հոդված 36.*** Օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասի «կազմում է» բառը փոխարինել «կայացնում է» բառով:

***Հոդված 37.*** Օրենսգրքի 190-րդ հոդվածի 4-րդ մասի «կարող է կցվել» բառերը փոխարինել «կցվում է» բառով:

***Հոդված 38.*** Օրենսգրքի 234.7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«***Հոդված 234.7. Պատասխանողի գործողությունները հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո***

1. Հայցադիմումի պատասխանը կամ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:»:

***Հոդված 39.*** Օրենսգրքի 234.9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 234.9. Գործի քննության կարգը**

1. Դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1) դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործին մասնակցող անձանցից ստանալ պարզաբանումներ գործի լուծման համար նշանակություն ունեցող վկայակոչված հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ.

2) ներկայացվել է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն.

3) հայցվորը հրաժարվել է պահանջից:

2. Գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:

3. Գործը դատական նիստում քննելու մասին դատարանը կայացնում է որոշում հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետը լրանալուց կամ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

4. Գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:»:

***Հոդված 40.*** Օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Վճիռը վերանայելու արդյունքով դատարանը կայացնում է նոր վճիռ, որում շարադրվում է կողմերի հաշտության համաձայնության բառացի շարադրանքը (տեքստը) կամ մերժում է վճռի վերանայումը, ինչի վերաբերյալ կայացնում է որոշում:»:

***Հոդված 41.*** Օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետում «հիսնապատիկը» բառը փոխարինել «երկուհարյուրապատիկը» բառով:

2) 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) հայցն ակնհայտ անհիմն է, եթե դրանում ձևակերպված հայցապահանջն ակնհայտորեն ոչ իրավաչափ է (ակնհայտորեն ենթակա է մերժման անկախ դրա հիմքում դրված փաստերից), կամ

հայցվորի կողմից դրա հիմքում դրված փաստերի հիման վրա ակնհայտորեն ենթակա է մերժման կամ ներկայացվել է ոչ պատշաճ հայցվորի կողմից կամ ոչ պատշաճ պատասխանողի դեմ (այսուհետ՝ ակնհայտ անհիմն հայց):»:

***Հոդված 42.*** Օրենսգրքի 362-րդ հոդվածի 4-րդ մասը «4-րդ մասով» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև 340-րդ հոդվածի 3-րդ մասով» բառերով, և «դեպքում» բառը փոխարինել «դեպքերում» բառով:»:

***Հոդված 43.*** Օրենսգրքի 365-րդ հոդվածի.

1) 2-րդ մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը, որը անհնար է դարձնում բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելը, եթե հնարավոր չէ արձանագրությունը վերականգնել հատուկ համակարգչային ձայնագրման համակարգից.»:

2) 3-րդ մասը՝ «2-րդ մասի» բառերից հետո լրացնել «1-ին», «5-րդ» բառից հետո «6-րդ,» բառերով, իսկ «և 11-րդ կետերով» բառերը փոխարինել «, 11-րդ և 12-րդ կետերով (բացառությամբ սույն օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքի)» բառերով:»:

***Հոդված 44.*** Օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Բողոքին կցվում է օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքը վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից, բողոքը գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցները, բացառությամբ հայցադիմումը վերադարձնելու և ընդունումը մերժելու դեպքերի, ինչպես նաև բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցը և վերաքննիչ բողոքի էլեկտրոնային կրիչը:»:

***Հոդված 45.*** Օրենսգրքի 371-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մաս.

«2.1. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 3.1-ին մասին համապատասխան Վերաքննիչ դատարանի աշխատակազմի կողմից կազմվում է արձանագրություն վերաքննիչ բողոքում առկա թերությունների մասին, սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետը հաշվարկվում է

արձանագրությամբ մատնանշված թերությունները վերացնելու համար սահմանված ժամկետն ավարտվելու օրվան հաջորդող հինգերորդ օրվանից:».

2) 3-րդ մասում «թույլ տրված» բառերից հետո լրացնել «բոլոր» բառը:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1, 3.2, 3.3.-րդ մասերով.

«3.1. Եթե ներկայացված վերաքննիչ բողոքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բողոք բերող անձը թույլ է տվել սույն հոդվածի 368-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ կետերի խախտումներ կամ բողոքին կցված չէ բողոքը գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցները կամ վերաքննիչ բողոքի էլեկտրոնային կրիչը, Վերաքննիչ դատարանի գրասենյակը կարող է հաղորդակցության միջոցով (առկայության դեպքում) ոչ ուշ քան մինչև համապատասխան դատավարական ժամկետը լրանալուց երեք օր առաջ տեղեկացնել բողոք բերող անձին վերաքննիչ բողոքում առկա թերությունների մասին՝ առաջարկելով մինչև եռօրյա ժամկետում վերացնել դրանք: Նման միջոցով տեղեկացման անհնարինության դեպքում Վերաքննիչ դատարանի գրասենյակը նույն ժամկետում կարող է կազմել վերաքննիչ բողոքում առկա թերությունների մասին արձանագրություն՝ նշելով առկա թերություններն արձանագրությունն ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, վերացնելու անհրաժեշտության մասին: Նշված արձանագրությունը ոչ ուշ, քան կազմման հաջորդ օրն ուղարկվում է բողոք բերող անձին:

3.2. Սույն հոդվածի 3.1-ին մասում նշված թերությունները վերացվելուց հետո Վերաքննիչ դատարանը սույն օրենսգրքի 370-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում, եթե բացակայում են վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժելու հիմքերը կամ վերաքննիչ բողոքը վերադարձնելու այլ հիմքեր:

3.3. Սույն հոդվածի 3.1.-ին մասում նշված թերությունները չվերացվելու կամ վերաքննիչ բողոքը վերադարձնելու այլ հիմքերի առկայության դեպքում Վերաքննիչ դատարանը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին:»:

4) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշում ընդունելու դեպքում բողոք բերած անձին ուղարկվում են վերաքննիչ դատարանի որոշումը, վերաքննիչ բողոքը և դրան կից ներկայացված այն փաստաթղթերը, որոնցում հայտնաբերվել են թերություններ՝ միաժամանակ գործին կցելով դրանց պատճենները: Այդ դեպքում բողոքը բերող անձը բողոքը կրկին ներկայացնելիս դրան չի կցում վերաքննիչ դատարանի կողմից չվերադարձված փաստաթղթերը: Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումն ուղարկվում է նաև գործին մասնակցող այլ անձանց:»:

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին մասով ՝

«5.1. Այն դեպքում, երբ բողոքը ներկայացվել է մի քանի անձանց կողմից Վերաքննիչ դատարանը բողոքում առկա թերություններ թույլ տված անձի համար սահմանում է սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետ՝ այդ թերությունները շտկելու և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու համար:»:

***Հոդված 46.*** Օրենսգրքի 372-րդ հոդվածում 1-ին մասը՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետով.

«1.1) սույն օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում բողոք ներկայացրած անձը բողոքը կրկին ներկայացնելու դեպքում թույլ է տվել նոր խախտումներ.»:

2) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) վերաքննիչ բողոքը բերվել է գույքային պահանջով քաղաքացիական գործով, եթե տվյալ գործով վեճի առարկայի արժեքը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը, բացառությամբ այն դեպքերի, երբ բողոք բերող անձն իր վերաքննիչ բողոքում հիմնավորում է, որ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ.»:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով.

« 8) բողոքը ներկայացվել է սույն օրենսգրքի 26-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված դեպքում.»:

***Հոդված 47.*** Օրենսգրքի 373-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

***«Հոդված 373. Վերաքննիչ վարույթի կարճումը.***

1. Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո մինչև բողոքի քննության ավարտի մասին հայտարարելը վերաքննիչ բողոք բերած անձն իրավունք ունի դիմում ներկայացնելու վերաքննիչ բողոքից հրաժարվելու մասին:

2. Բողոք բերած անձի կողմից վերաքննիչ բողոքից հրաժարվելու դեպքում վերաքննիչ դատարանը կայացնում է վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշում: Եթե դատական ակտը բողոքարկել են նաև այլ անձինք, ապա վարույթը կարճվում է միայն տվյալ բողոքի մասով:

3. Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո սույն օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով վերաքննիչ վարույթը կասեցվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, բողոք բերողին փոխարինելու վերաբերյալ միջնորդություն չներկայացվելու դեպքում վերսկսում է գործի վարույթը և կայացնում է վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշում:

4. Վերաքննիչ վարույթը կարճելու մասին վերաքննիչ դատարանի որոշման հրապարակման պահից առաջին ատյանի դատարանի դատական ակտը մտնում է օրինական ուժի մեջ, եթե այն չեն բողոքարկել այլ անձինք:

5. Վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշումն ուղարկվում է գործին մասնակցող անձանց:

6. Վերաքննիչ դատարանի՝ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված որոշումը կարող է բողոքարկվել Վճռաբեկ դատարան հրապարակման պահից 15 օրյա ժամկետում:

7. Վերաքննիչ վարույթը կարճելու մասին վերաքննիչ դատարանի որոշմամբ վերաքննիչ վարույթի հետ կապված դատական ծախսերը դրվում են վերաքննիչ բողոքից հրաժարված անձի վրա, բացառությամբ սույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասում նշված դեպքերի:»:

***Հոդված 48.*** Օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասը «Վճռի» բառից հետո լրացնել «, այլ եզրափակիչ դատական ակտերի» բառերով:»:

***Հոդված 49.*** Օրենսգրքի 386-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բացառիկ դեպքերում, երբ առկա են դատավորի կամքից անկախ, օբյեկտիվ հանգամանքներ, որոնք անհնար են դարձնում հայտարարված ժամկետում որոշման հրապարակումը, դատարանը կարող է մինչև 15 օրով երկարաձգել որոշման հրապարակման ժամկետը՝ այդ մասին ծանուցելով գործին մասնակցող անձանց:»:

***Հոդված 50.*** Օրենսգրքի 387-րդ հոդվածի ՝

1) 1-ին մասը «15 օր հետո» բառերից հետո լրացնել «, բացառությամբ գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին որոշման, ինչպես նաև վերաքննիչ բողոքից հրաժարվելու հիմքով վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշումների» բառերով:

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. «Սնանկության մասին» օրենքով նախատեսված՝ պարտատերերի պահանջների հաստատման կապակցությամբ կայացված որոշումների դեմ բերված, ինչպես նաև Գնումների հետ կապված վեճերով կայացված վճիռների դեմ բերված բողոքների քննության արդյունքով, ինչպես նաև բողոքից հրաժարվելու և գործը հաշտության համաձայնությամբ ավարտելու կապակցությամբ վերաքննիչ դատարանի կայացված որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:»:

3) 3-րդ մասը «կայացման պահից» բառերից հետո լրացնել «, բացառությամբ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման, որը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից 15 օր հետո» բառերով:

***Հոդված 51.*** Օրենսգրքի 389-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

«3) դատավարության մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1.-ին մասով.

«3.1. Գործին մասնակից չդարձած անձինք վերաքննիչ դատարանի եզրափակիչ դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող են ներկայացնել այն դեպքում, եթե իրենց իրավունքները և պարտականությունները շոշափվել են վերաքննիչ դատարանի եզրափակիչ դատական ակտով:»:

***Հոդված 52.*** Օրենսգրքի 391-րդ հոդվածը լրացնել՝ հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.

«2.1. Սույն օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ակտերի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել այդ ակտերի հրապարակման պահից տասնհինգօրյա ժամկետում:»:

***Հոդված 53.*** Օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի «բերվում են» բառերը փոխարինել «բերվում է» բառերով:

***Հոդված 54.*** Օրենսգրքի 395-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 393-րդ հոդվածի պահանջներին, վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը, կամ դատարանը մերժել է պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդությունը, կամ վճռաբեկ բողոք է բերվել մեկից ավելի դատական ակտերի դեմ:

Եթե ներկայացված վճռաբեկ բողոքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բողոք բերող անձը թույլ է տվել սույն օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի խախտումներ կամ բողոքին կցված չէ բողոքը գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցները կամ վճռաբեկ բողոքի էլեկտրոնային կրիչը, Վճռաբեկ դատարանի գրասենյակը կարող է հաղորդակցության միջոցով (առկայության դեպքում) տեղեկացնել բողոք բերող անձին վճռաբեկ բողոքում առկա թերությունների

մասին՝ առաջարկելով եռօրյա ժամկետում վերացնել դրանք: Նման միջոցով տեղեկացման անհնարինության դեպքում Վճռաբեկ դատարանի գրասենյակը նույն ժամկետում կարող է կազմել վճռաբեկ բողոքում առկա թերությունների մասին արձանագրություն՝ նշելով առկա թերություններն արձանագրությունն ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում վերացնելու անհրաժեշտության մասին: Նշված արձանագրությունը ոչ ուշ, քան կազմման հաջորդ օրն ուղարկվում է բողոք բերող անձին:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին, 1.2-րդ, 1.3-րդ մասերով.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասում նշված թերությունները վերացվելուց հետո Վճռաբեկ դատարանը սույն օրենսգրքի 394-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում կայացնում է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում, եթե բացակայում են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու կամ առանց քննության թողնելու  հիմքերը կամ վճռաբեկ բողոքը վերադարձնելու այլ հիմքեր:

1.2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված թերությունները չվերացվելու կամ վճռաբեկ բողոքը վերադարձնելու այլ հիմքերի առկայության դեպքում Վճռաբեկ դատարանը սույն օրենսգրքի 395-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին:

1.3. Այն դեպքերում, երբ վճռաբեկ բողոքում առկա թերությունների վերացման համար բողոք բերող անձը չի տեղեկացվում, այդ թվում՝ երբ արձանագրություն չի կազմվում, և վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 393-րդ հոդվածի պահանջներին, վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը, կամ դատարանը մերժել է պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդությունը կամ վճռաբեկ բողոք է բերվել մեկից ավելի դատական ակտերի դեմ, վճռաբեկ բողոքը վերադարձվում է:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

«3.1. Այն դեպքում, երբ բողոքը ներկայացվել է մի քանի անձանց կողմից Վճռաբեկ դատարանը բողոքում առկա թերություններ թույլ տված անձի համար սահմանում է մինչև մեկամսյա ժամկետ՝ այդ թերությունները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:»:

***Հոդված 55.*** Օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 7-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով.

«8) բողոքը ներկայացվել է նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով ուժի մեջ չմտած դատական ակտի դեմ:»:

***Հոդված 56.*** Օրենսգրքի 406-րդ հոդվածի 5-րդ մասի 8-րդ կետը «բեկանելիս» բառից հետո լրացնել «կամ օրինական ուժի մեջ թողնելիս» բառերով:

***Հոդված 57.*** Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը «տվյալ» բառից հետո լրացնել «կամ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ այլ» բառերով :

***Հոդված 58.*** Օրենսգրքի 422-րդ հոդվածի 4-րդ մասը «բողոք բերված լինելու» բառերից հետո լրացնել «կամ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման» բառերով:

***Հոդված 59. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ***

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 2-րդ, 10-րդ, 13-րդ և 30-րդ հոդվածներով նախատեսված դրույթները տարածվում են նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վարույթ ընդունված հայցադիմումներով գործերի քննության վրա:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի փետրվարի 9-ի ՀՕ-26-Ն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետը:

*ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

*Կ-693-30.10.2023-ՊԻ-011/1*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ~~ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ~~ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** 2018 թվականի փետրվարի 9-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) ~~5-րդ հոդվածում՝~~

~~1) 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետում «վճիռը» բառից հետո լրացնել «, լրացուցիչ վճիռը» բառերը:~~

~~2) 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.~~

~~«բ. հայցադիմումի ընդունումը մերժելու, գործի վարույթը կարճելու, հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու, լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին որոշումը, արբիտրաժի վճիռը, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու, արբիտրաժի վճռի, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու, օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման, օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու, կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, կատարողական թերթ ստանալու բաց թողնված ժամկետը վերականգնելու, դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոխելու, դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ դիմումների քննության արդյունքով կայացվող որոշումները.»:~~

~~***Հոդված 2.***~~ ~~Օրենսգրքի~~ 17-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 17. Դատական վարույթի հրապարակայնությունը**

1. Դատարանում գործը քննվում է դռնբաց դատական նիստում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

2. Դատավարության մասնակիցների մասնավոր կյանքի, ներառյալ՝ առևտրային գաղտնիքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով դատարանը գործին

մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ դատական վարույթը կամ դրա մի մասը կարող է անցկացնել դռնփակ:

3. Դատական վարույթը կամ դրա մի մասը դռնփակ անցկացնելու հարցը լուծվում է դռնփակության պայմաններում:

4. Դատական վարույթը կամ դրա մի մասը դռնփակ անցկացնելու մասին դատարանը կայացնում է որոշում:

5. Դռնփակ դատական նիստում գործի քննությունն իրականացվում է սույն օրենսգրքով սահմանված կանոնների պահպանմամբ: Դատական վարույթը կամ դրա մի մասը դռնփակ նիստում քննելու դեպքում դատական նիստին իրավունք ունեն ներկա լինելու դատական նիստերի քարտուղարը, գործին մասնակցող անձինք, նրանց ներկայացուցիչները, դատական կարգադրիչները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վկան, փորձագետը, մասնագետը և թարգմանիչը: Նշված անձինք դատարանի կողմից ստորագրություն վերցնելու միջոցով նախազգուշացվում են օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունները չհրապարակելու և սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու համար պատասխանատվության մասին:

6. Դռնփակ դատական նիստում տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառումն արգելվում է:

7. Դատարանի՝ եզրափակիչ, իսկ սույն օրենսգրքով կամ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ նախատեսված դեպքերում նաև այլ դատական ակտերը հրապարակվում են դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

8. Դատական վարույթը կամ դրա մասը դռնփակ անցկացնելու դեպքում դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվում է եզրափակիչ դատական ակտի եզրափակիչ մասը, բացառությամբ այն դեպքերի, երբ այն պարունակում է օրենքով պահպանվող գաղտնիք: Եզրափակիչ դատական ակտի՝ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող եզրափակիչ մասը հրապարակվում է դռնփակ նիստում:

9. Դատական վարույթը կամ դրա մի մասը դատարանի որոշմամբ դռնփակ անցկացնելու դեպքում տվյալ գործի հետագա քննությունն այլ դատական ատյաններում կատարվում է դռնփակ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ որոշում է կայացնում գործի քննությունը դռնբաց իրականացնելու վերաբերյալ:»:

***Հոդված 23.*** Օրենսգրքի 26-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 26. Ընդդատության և ենթակայության մասին վեճերը**

1. Գործն ըստ տարածքային ընդդատության կամ սնանկության դատարանից ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:

3. Հակակոռուպցիոն դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում դատարանից ըստ ենթակայության ստացած գործը վարույթ ընդունելու կամ այն Վճռաբեկ դատարանին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում հակակոռուպցիոն դատարանից ըստ ենթակայության ստացած գործը վարույթ. ընդունելու կամ այն Վճռաբեկ դատարանին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:

4. Սույն հոդվածի 1-3-րդ ~~2-րդ և 3-րդ~~ մասերով նախատեսված դեպքերում, դատավորը ենթակայության հարցի որոշման համար գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին կայացված որոշումը ուղարկում է գործին մասնակցող անձանց, ովքեր այն ստանալու պահից եռօրյա ժամկետում կարող են գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

5. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

~~6. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում՝ Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատների նախագահները, իսկ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում՝ Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և հակակոռուպցիոն պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:~~

~~7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրվում է նիստ՝ իր, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և համապատասխանաբար վարչական կամ հակակոռուպցիոն պալատի նախագահների~~

~~մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:~~

~~8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների մեծամասնությունը կազմում է որոշման նախագիծը:~~

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում՝ Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր, և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:»:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացնելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով:»:

***Հոդված 34.*** Օրենսգրքի 27-րդ հոդվածում՝

1) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Վճռաբեկ դատարանում վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու, վճռաբեկ բողոքը վերադարձնելու, վճռաբեկ բողոքի ընդունումը մերժելու, վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու հարցը լուծվում է նիստին ներկա դատավորների ձայների ընդհանուր թվի մեծամասնությամբ, իսկ վճռաբեկ բողոքը քննվում է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի, իսկ հակակոռուպցիոն

պալատում՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության դատական կազմի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ:».

2) 11-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Հատուկ կարծիքը հրապարակվում է դատական ակտի հրապարակումից հետո տասնօրյա յոթնօրյա ժամկետում:»:

***Հոդված 45.*** Օրենսգրքի 29-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Գործի քննությունը կարող է ընդհատվել, իսկ դատական նիստի ընթացքում ինքնաբացարկ կամ բացարկ հայտնելու դեպքում նիստը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան երեք օրով:»:

2) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Դատավորն ինքնաբացարկի կամ բացարկի հարցը քննելու արդյունքով կայացնում է որոշում, որում շարադրվում են ինքնաբացարկի կամ բացարկի հիմքերը: Դատարանի որոշումը հանձնվում կամ ուղարկվում է գործին մասնակցող անձանց ոչ ուշ, քան այն կայացնելու հաջորդ օրն օրը:»:

***Հոդված 56.*** Օրենսգրքի 37-րդ հոդվածը լրացնել նոր 1.1-րդ և 1.2-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ. Օրենսգրքի 37-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին և 1.2-րդ մասերով.

«1.1. Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի հայցադիմումը ներկայացվում է, վարույթ է ընդունվում, հայցադիմումի ընդունումը մերժվում է կամ հայցադիմումը վերադարձվում է հայցադիմումին վերաբերող սույն Օրենսգրքով օրենսգրքով նախատեսված կարգով:»:

«1.2. Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի հայցադիմումը առաջին ատյանի դատարանն ընդունում է վարույթ, եթե՝

1) պահանջը ներկայացվել է վեճի առարկայի նկատմամբ,

2) հայցի և գործով քննվող պահանջների համատեղ քննությունը կարող է ապահովել գործի առավել արագ և արդյունավետ լուծումը:»:

***Հոդված ~~7~~6.*** Օրենսգրքի 38-րդ հոդվածում.

1) ~~3-րդ մասի առաջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.~~ 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությունով.

«Եթե հասցեատիրոջը ուղարկված ծանուցումը վերադարձվում է դատարան կամ որևէ այլ պատճառով հասցեատերը այն չի ստանում, ապա ծանուցումը իրականացվում է սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի սահմանված կարգով:».

2) լրացնել նոր ~~7.1-րդ~~ 7.1.-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«7.1. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով ծանուցված անձինք իրավունք ունեն ծանոթանալու գործի նյութերին, ստանալու դրանց պատճենները, գործի նյութերից անելու քաղվածքներ, լուսանկարներ, լուսապատճեններ և պատճեններ, բացառությամբ այն դեպքերի, երբ գործի նյութերը պարունակում են օրենքով պահպանվող գաղտնիք:»:

~~***Հոդված 8.*** Օրենսգրքի 39-րդ հոդվածըրշարադրելի 39-րդ հոդվածրդ մասով~~

~~«Հոդված 39. Դիմողը և դիմումի քննության ելքով շահագրգռված այլ անձինք~~

~~1. Դիմողն այն անձն է, որը ներկայացրել է սույն օրենսգրքով նախատեսված հատուկ կամ այլ վարույթի կարգով քննվող դիմում:~~

~~2. Դիմումի քննության ելքով շահագրգռված անձը այն անձն է, որի իրավունքների և պարտականությունների վրա կարող է անխուսափելիորեն ազդել եզրափակիչ դատական ակտը:~~

~~3. Առաջին ատյանի դատարանը մինչև դատաքննության ավարտը դիմողի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ կարող է ներգրավել կամ գործին մասնակցող անձանց կազմից հանել դիմումի քննության ելքով շահագրգռված այլ անձանց:»:~~

***Հոդված ~~7~~9.*** Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ ~~մասում~~ մասի «կողմն» բառը փոխարինել «գործին մասնակցող անձն» բառերով:

***Հոդված 810.*** Օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասում մասը «նախատեսված» բառերից բառից հետո լրացնել «և օրենքով սահմանված այլ» բառերով:

***Հոդված 119.*** Օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-րդ մասում մասը «և այլն)» բառերից հետո լրացնել «, բացառությամբ այն դեպքերի, եթե նշված անձը գործի քննությանը մասնակցում է որպես հակադիր շահեր ունեցող կողմ» բառերը բառերով:

***Հոդված 1012.*** Օրենսգրքի 97-րդ հոդվածը լրացնել նոր 4.1-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. Օրենսգրքի 97-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին մասով.

«4.1. Դատական ծանուցագիրը հեռախոսակապի (այդ թվում՝ տեքստային հաղորդագրության) կամ էլեկտրոնային հարթակով (ինտերնետային կայքով, էլեկտրոնային հավելվածով կամ համանման այլ միջոցներով) ուղարկելը կամ այդ մասին հաղորդելը հնարավոր է, եթե կողմն ինքն է դատարանին այդ նպատակով տրամադրել իր հեռախոսահամարը կամ էլեկտրոնային հասցեն: Այդ դեպքում նշված հեռախոսահամարին կամ էլեկտրոնային հասցեին ուղարկված կամ հաղորդած ցանկացած տեղեկություն համարվում է ընդունված կամ ստացված հասցեատիրոջ կողմից: Հեռախոսակապի միջոցով իրականացված ծանուցումը պատշաճ է համարվում, եթե առկա է դատական ծանուցագրի հաղորդագրությունն ուղարկելու և այն հասցեատիրոջ կողմից ստացվելու փաստը հաստատելու հնարավորություն, իսկ հեռախոսային խոսակցության դեպքում՝ դրա բովանդակության մասին ձայնագրություն: Ծանուցման նման եղանակի կիրառման մասին վկայող նյութերը կցվում են գործին:»:

***Հոդված 1113.*** Օրենսգրքի 102-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «հայց ներկայացնելու համար» բառերը:

***Հոդված 14.*** Օրենսգրքի 103-րդ հոդվածի 2-րդ մասում «հանգամանքները» բառից հետո լրացնել «և լուծել պետական տուրքը լրիվ կամ մասնակի վերադարձնելու հարցը» բառերը:

***Հոդված 1215.*** Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում՝ գրավոր միջնորդության տեսքով: Նման պահանջից հրաժարվելու կամ այդ կարգը չպահպանելու դեպքում դատական ծախսերի հատուցման հարցը համարվում է լուծված:»:

***Հոդված 1316.*** Օրենսգրքի 109-րդ հոդվածը լրացնել նոր 8-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«8. Ներկայացված առանձին հայցապահանջների նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու հիմքերի առկայության դեպքում, եթե դատարանն այդ մասով առանձնացնում է գործի վարույթը և առանձնացված մասով կայացնում է հայցը մերժելու մասին վճիռ, ապա նշված վճռում դատարանը նշում է կատարում դատական ծախսերի հարցին վերսկսված մասով կայացվելիք եզրափակիչ դատական ակտով անդրադառնալու մասին:»:

Օրենսգրքի 109-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մասով.

«9. Ներկայացված առանձին հայցապահանջների նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու հիմքերի առկայության դեպքում, եթե դատարանն այդ մասով առանձնացնում է գործի վարույթը և առանձնացված մասով կայացնում է հայցը մերժելու մասին վճիռ, ապա նշված վճռում դատարանը կարող է նշում կատարել դատական ծախսերի հարցին առանձնացված գործով կայացվելիք եզրափակիչ դատական ակտով անդրադառնալու մասին:»

***Հոդված 1417.*** Օրենսգրքի 110-րդ հոդվածի 3-րդ մասում «անդրադառնում են» բառերը փոխարինել «իրավունք ունեն անդրադառնալ անդրադառնալու» բառերով:

***Հոդված 1518.*** Օրենսգրքի 118-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «Առաջին ատյանի դատարանը» բառերը փոխարինել «Դատարանը» բառով,

2) լրացնել նոր 3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Դատարանը բացառիկ դեպքերում որոշմամբ կարող է իր նախաձեռնությամբ ոչ ավելի, քան երեք օրով երկարաձգել միջնորդության քննության և լուծման, առանձին դատավարական գործողության կատարման դատավարական ժամկետը:»:

Օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին մասում «Առաջին ատյանի դատարանը» բառերը փոխարինել «Դատարանը» բառով:

***Հոդված 1619.*** Օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին նախադասության մասը «վերադարձնելու հիմքերը» բառերից հետո լրացնել «իսկ սույն Օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված անվերապահ բեկանման հիմքերից որևէ մեկով հայցադիմումի ընդունումը

մերժելու մասին որոշումը վերացվելու դեպքերում առաջին ատյանի դատարանը հայցադիմումն ընդունում է վարույթ, եթե բացակայում են հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը» բառերով:

***Հոդված 2017.*** Օրենսգրքի 127-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 10-րդ կետում «հոդվածի 3-րդ մասով» բառերը փոխարինել «հոդվածի 1-ին և 3-րդ մասերով» բառերով:

2) 1-ին մասի 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12) վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձը հայցադիմումը ներկայացրել է սույն օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին, 1.1-րդ և 1.2-րդ մասերով սահմանված պահանջների խախտմամբ.»:

3) 4-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Կրկին ներկայացված հայցադիմումում նույն խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ խախտումները վերացնելու հնարավորությունից հայցվորը զրկված էր իր կամքից անկախ պատճառներով:»:

4) 5-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Եթե հայցադիմումը վերադարձնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը բողոքարկված լինելու պայմաններում հայցադիմումը կրկին ներկայացվել է դատարան, ապա առաջին ատյանի դատարանը կրկին ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու հարցի վերաբերյալ որոշում է կայացնում վերաքննիչ դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման վերաբերյալ դատական ակտ կայացնելուց հետո:»:

5) 6-րդ մասի 1-ին նախադասության «մերժելու հիմքերը» բառերից հետո լրացնել «, իսկ սույն Օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված անվերապահ բեկանման հիմքերից որևէ մեկով հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը վերացվելու դեպքերում առաջին ատյանի դատարանը հայցադիմումն ընդունում է վարույթ, եթե բացակայում են հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը» բառերով:

«Օրենսգրքի 127-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի՝

ա.10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) հակընդդեմ հայցադիմումը չի համապատասխանում սույն օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին կամ 3-րդ մասով սահմանված պահանջներին.».

բ.12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12) վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձը հայցադիմումը ներկայացրել է սույն օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին, 1.1.-ին և 1.2-րդ մասերով սահմանված պահանջների խախտմամբ.».

գ. 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14) հայցադիմումը ներկայացվել է այն ներկայացնելու օրվա դրությամբ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցող գումարի բռնագանձման պահանջով, որը ենթակա է քննության նոտարի կողմից, և առկա չէ

ա. նոտարի կողմից նույն պահանջով գումարի բռնագանձման կարգադրություն արձակվելու վերաբերյալ դիմումըմերժելու մասին որոշում, բացառությամբ «Նոտարիատի մասին» օրենքի 82.9-րդ հոդվածի 1.1.-ին մասով նախատեսված հիմքով դիմումը մերժելու դեպքի կամ,

բ. նոտարի կողմից նույն պահանջով կարգադրությունը չեղյալ ճանաչվելու վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշում:».

2) 1.3.-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.3. Սույն հոդվածի 1.1-ին մասում նշված թերությունները չվերացվելու կամ հայցադիմումը վերադարձնելու այլ հիմքերի առկայության դեպքում առաջին ատյանի դատարանը սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում հայցադիմումը վերադարձնելու մասին:»:

3) 4-րդ մասի՝

ա. «և 10-12-րդ» բառերը փոխարինել « 10-12-րդ և 14-րդ» բառերով.

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Կրկին ներկայացված հայցադիմումում նույն խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ խախտումները վերացնելու հնարավորությունից հայցվորը զրկված էր իր կամքից անկախ պատճառներով:»:

4) 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությունով.

«Եթե հայցադիմումը վերադարձնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը բողոքարկված լինելու պայմաններում հայցադիմումը կրկին ներկայացվել է դատարան, ապա առաջին ատյանի դատարանը կրկին ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու հարցի

վերաբերյալ որոշում է կայացնում վերաքննիչ դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման վերաբերյալ դատական ակտ կայացնելուց հետո:»:

5) 6-րդ մասը 1-ին նախադասության «մերժելու հիմքերը» բառերից հետո լրացնել «, իսկ սույն Օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված անվերապահ բեկանման հիմքերից որևէ մեկով հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը վերացվելու դեպքերում առաջին ատյանի դատարանը հայցադիմումն ընդունում է վարույթ, եթե բացակայում են հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը» բառերով:»:

***Հոդված ~~21~~18***. Օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին ~~մասում~~ մասը «գործին մասնակցող անձի միջնորդությամբ» բառերից հետո լրացնել «կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իր նախաձեռնությամբ» բառերով:

***Հոդված ~~22~~19***. ~~Օրենսգրքի 130-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.~~

~~«3. Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելուց հետո ներկայացվելու և դատարանի կողմից բավարարվելու դեպքում՝ հայցի ապահովման միջոց կիրառելու կամ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մասնակի բավարարելու մասին դատարանի որոշումը ուղարկվում է պատասխանողին և գործին մասնակցող այլ անձանց հայցի ապահովման մասին դատարանի որոշումը կատարելուց հետո՝ եռօրյա ժամկետում:»:~~

Օրենսգրքի 131-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին մասով.

«5.1. Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելուց հետո ներկայացվելու և դատարանի կողմից բավարարվելու դեպքում՝ հայցի ապահովման միջոց կիրառելու կամ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մասնակի բավարարելու մասին դատարանի որոշումը ուղարկվում է պատասխանողին և գործին մասնակցող այլ անձանց հայցի ապա:հովման մասին դատարանի որոշումը կատարելուց հետո՝ եռօրյա ժամկետում:»:

**Հոդված ~~23~~20**. Օրենսգրքի 134-րդ հոդվածում 2-րդ մասի 1-ին ~~կետում~~ կետը «բացակայում են» բառերից հետո լրացնել «կամ վերացել են» բառերը:~~,~~

***Հոդված ~~24~~21.*** ~~Օրենսգրքի 135-րդ հոդվածի 6-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.~~ Օրենսգրքի 135-րդ հոդվածի 6-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությունով.

«Հայցագնի չափով գույքի վրա արգելանք դնելու մասին հայցի ապահովման միջոց կիրառված լինելու դեպքում դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կայացնում է հայցի ապահովման միջոցը մասնակի վերացնելու մասին որոշում՝ հակընդդեմ ապահովման չվճարված գումարի չափով:»:

***Հոդված ~~25~~22.*** Օրենսգրքի 140-րդ հոդվածի 4-րդ մասը «իրենից անկախ պատճառներով» բառերից հետո լրացնել «կամ հակընդդեմ հայց չի ներկայացվել ընտանեկան գործերով վարույթի ընթացքում» ~~բառերը~~ բառերով:

**Հոդված 23.** Օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասը «հետևանքները» բառից հետո լրացնել «բացառությամբ սույն օրենսգրքի 183-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերի» բառերով:

***Հոդված ~~26~~24.*** Օրենսգրքի 152-րդ հոդվածում՝

~~1) 5-րդ մասում՝~~

~~ա. «սույն Օրենսգրքի» բառերը փոխարինել «Սույն հոդվածի» բառերով.~~

~~բ. «չի քննարկվում» բառերից հետո լրացնել «, որի մասին միջնորդությունը ներկայացրած անձը տեղեկացվում է ոչ ուշ, քան հաջորդ օրը:»:~~

1) 5-րդ մասի՝

ա. «օրենսգրքի» բառը փոխարինել «հոդվածի» բառով.

բ. «չի քննարկվում» բառերից հետո լրացնել «, որի մասին միջնորդությունը ներկայացրած անձը տեղեկացվում է ոչ ուշ, քան հաջորդ օրը:» բառերը:

2) 6-րդ մասում՝

ա. «արգելվում է» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն Օրենսգրքի 170-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքի» բառերը:

բ. 2-րդ նախադասությունում «հիմքով» բառից առաջ լրացնել «փաստական» բառը.

գ. ~~երկրորդ նախադասության~~ «չի քննարկվում» բառերից հետո լրացնել «, որի մասին միջնորդությունը ներկայացրած անձը տեղեկացվում է ոչ ուշ, քան հաջորդ օրը» բառերը :

***Հոդված ~~27~~25.*** Օրենսգրքի 153-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Տուգանք կիրառելիս կամ գործին մասնակցող անձին դատական նիստերի դահլիճից հեռացնելիս արտահայտվելու իրավունք չտրամադրելը դատարանը պետք է ~~հնարավորության դեպքում~~ պատճառաբանի այդ անձի ներկայությամբ, եթե առկա է դրա հնարավորությունը, կամ այդ անձի բացակայությամբ:»:

***Հոդված ~~28~~26.*** ~~Օրենսգրքի 156-րդ հոդվածը 1-ին մասի՝~~

~~1) 6-րդ կետում «պատասխանողը» բառը փոխարինել «գործին մասնակցող անձը» բառերով.~~

~~2) 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.~~

~~«10) առաջին ատյանի դատարանը որոշել է գործի քննությանը ներգրավել գործին մասնակցող նոր անձի կամ սույն Օրենսգրքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ծանուցել որևէ անձի.».~~

~~3) 11-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.~~

~~«Նման պայմաններում գործի քննությունը հետաձգելու գործողությունը կարող է կատարվել դատական նիստից դուրս»:~~

~~4) 14-րդ կետում «դեպքում» բառը փոխարինել «կամ սույն Օրենսգրքով սահմանված դատավարական գործողությունները կատարելու անհրաժեշտության դեպքերում» բառերով:~~

Օրենսգրքի 156-րդ հոդվածի

1) 1-ին մասի՝

ա) 6-րդ կետի «պատասխանողը» բառը փոխարինել «գործին մասնակցող անձը» բառերով.

բ) 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) առաջին ատյանի դատարանը որոշել է գործի քննությանը ներգրավել գործին մասնակցող նոր անձի կամ սույն Օրենսգրքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ծանուցել որևէ անձի.».

գ) 14-րդ կետի «դեպքում» բառը փոխարինել «կամ սույն Օրենսգրքով սահմանված դատավարական գործողությունները կատարելու անհրաժեշտության դեպքերում» բառերով.

2) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Սույն հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքում գործի քննությունը հետաձգելու գործողությունը կարող է կատարվել դատական նիստից դուրս»:

***Հոդված ~~29~~27.*** Օրենսգրքի 157-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին ~~կետում~~ կետի «ակտ կայացնելը» բառերը փոխարինել «ակտի օրինական ուժի մեջ մտնելը» բառերով.

2) ~~լրացնել նոր 4-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.~~ լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի հիմքով գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը դատարանը կայացնում է Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշման հետ միաժամանակ:»:

***Հոդված ~~30~~28*** ~~. Օրենսգրքի 158-րդ հոդված լրացնել նոր 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.~~ Օրենսգրքի 158-րդ հոդված լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված դատավարական գործողությունները կատարելու համար դատարանի նախաձեռնությամբ, հավելյալ պարզաբանումներ ստանալու նպատակով, կարող է հրավիրվել դատական նիստ, որի ժամանակի և վայրի մասին ծանուցվում են գործին մասնակցող անձինք:»:

***Հոդված ~~31~~29.*** Օրենսգրքի 159-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասից հանել «, կամ երբ տեղի է ունեցել դատական կազմի փոփոխություն, և գործը վարույթ է ընդունել նոր դատավորը» բառերը.

2) ~~լրացնել նոր 2.1-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.~~ լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մաս.

«2.1. Դատական կազմի փոփոխության և գործը նոր դատավորի կողմից վարույթ ընդունվելու պարագայում այդ գործի կասեցված վարույթը կարող է վերսկսվել:»:

3) 4-րդ մասում մասը «հայցվորին,» բառից հետո լրացնել «(դիմողին)» բառերով:

***Հոդված 3230.*** Օրենսգրքի 168-րդ հոդվածում՝

1) լրացնել նոր 2.1. րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Եթե գործին մասնակցող անձը կամ նրա ներկայացուցիչը չի ներկայացել դատական նիստին, ապա դատարանը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված գործողությունները կատարելուց հետո՝ երեք օրվա ընթացքում, գործին մասնակցող անձանց ծանուցում է այդ մասին:»:

2) 7-րդ մասում 3-րդ նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Գործի քննության արդյունավետությունից ելնելով դատարանը կարող է դատական ծախսերի հարցին անդրադառնալ վեճն ըստ էության լուծող եզրափակիչ դատական ակտով:»:

3) լրացնել նոր 8-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«8. Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգը դատարանի հայեցողությամբ կարող է չկիրառվել, եթե դա բխում է գործի քննության արդյունավետությունից կամ գործին մասնակցող անձինք համաձայն են, որպեսզի հայցային վաղեմության հարցին դատարանն անդրադառնա գործի ըստ էության քննության արդյունքում կայացվելիք եզրափակիչ դատական ակտով:»:

Օրենսգրքի 168-րդ հոդվածը՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1.-ին մասով.

«2.1. Եթե գործին մասնակցող անձը կամ նրա ներկայացուցիչը չի ներկայացել դատական նիստին, ապա դատարանը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված գործողությունները կատարելուց հետո՝ երեք օրվա ընթացքում, գործին մասնակցող անձանց ծանուցում է այդ մասին:»:

2) 7-րդ մասում 3-րդ նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն.

«Գործի քննության արդյունավետությունից ելնելով դատարանը կարող է դատական ծախսերի հարցին անդրադառնալ վեճն ըստ էության լուծող եզրափակիչ դատական ակտով:»:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մաս.

«8. Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգը դատարանի հայեցողությամբ կարող է չկիրառվել, եթե դա բխում է գործի քննության արդյունավետությունից կամ գործին մասնակցող անձինք համաձայն են, որ հայցային վաղեմության հարցին դատարանն անդրադառնա գործի ըստ էության քննության արդյունքում կայացվելիք եզրափակիչ դատական ակտով:»:

***Հոդված 3331.*** Օրենսգրքի 170-րդ հոդվածում լրացնել նոր 7-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ. Օրենսգրքի 170-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մաս.

«7. Հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը դատարանը չի քննարկում, եթե չի ներկայացվել օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից, իսկ այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումից ազատելու, դրա վճարումը հետաձգելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա բացակայում է դրա վերաբերյալ միջնորդությունը, կամ դատարանն այն չի բավարարել:»:

***Հոդված 3432.*** Օրենսգրքի 173-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությունով

«Նոր պատասխանող ներգրավելու միջնորդության մեջ պետք է նշվեն նոր պատասխանող ներգրավելու հիմքերը և հիմնավորումները:»:

2) լրացնել նոր 1.1-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասի պահանջները չպահպանելու դեպքում ներկայացված միջնորդությունը չի քննարկվում:»:

***Հոդված 335.*** Օրենսգրքի 180-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «Առաջին ատյանի» բառերը,

2) 1-ին մասի 11-րդ կետում՝

2.1) «:» կետադրական նշանը փոխարինել «,» կետադրական նշանով:

2.2) «շարունակելու վերաբերյալ,» բառերից հետո լրացնել «բացառությամբ այն գործերի, որոնցում սկզբնական հայցի հետ համատեղ քննվում է նաև հակընդդեմ հայց:» բառերը:

4) 1-ին մասում լրացնել նոր 12-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«12) օրենքով նախատեսված այլ դեպքերում:»:

Օրենսգրքի 180-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «Առաջին ատյանի դատարանը» բառերը փոխարինել «Դատարանը» բառով,

2) 1-ին մասի 11-րդ կետը

«շարունակելու վերաբերյալ» բառերից հետո լրացնել «, բացառությամբ այն գործերի, որոնցում սկզբնական հայցի հետ համատեղ քննվում է նաև հակընդդեմ հայց» բառերը:

3) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-րդ կետով.

«12) օրենքով նախատեսված այլ դեպքերում:»:

***Հոդված 346.*** Օրենսգրքի 182-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «Առաջին ատյանի» բառերը:

2) 1-ին մասի 2-րդ կետում «առանց քննության թողնելու մասին որոշման» բառերից հետո լրացնել «և ընտանեկան վեճերի վերաբերյալ գործերով օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտերի» բառերը:

Օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասից հանել «Առաջին ատյանի» բառերը, և «դատարանը» բառը փոխարինել «Դատարանը» բառով:»:

***Հոդված 357.*** Օրենսգրքի 183-րդ հոդվածում՝ Օրենսգրքի 183-րդ հոդվածի՝

1) 1-ին մասից հանել «առաջին ատյանի» բառերը:

2) 4-րդ մասը մասում «վերաքննիչ» բառից հետո լրացնել «կամ վճռաբեկ» բառերը բառերով:

3) 7-րդ մասում մասը «մեկ այլ դատավորի» բառերից հետո լրացնել «կամ դատարանի կազմի» բառերով:

4) լրացնել նոր 10-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ մասով

«10. Սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգը չի կիրառվում այն դեպքերում, երբ պահանջներից հրաժարվելու միջնորդությունը ներկայացնում է իրավաբանական անձը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ որպես ներկայացուցիչ փաստաբան ունեցող ֆիզիկական անձը:փաստաբան ներկայացուցիչ ունեցող ֆիզիկական անձը:»:

***Հոդված 3836.*** Օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասում «կազմում է» բառը փոխարինել «կայացնում է» բառով, իսկ «եզրափակիչ մասը» բառերը փոխարինել «վերջին էջը» բառերով: Օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասի «կազմում է» բառը փոխարինել «կայացնում է» բառով:

***Հոդված 3937.*** Օրենսգրքի 190-րդ հոդվածի 4-րդ մասում մասը «կարող է կցվել» բառերը փոխարինել «կցվում է» բառով:

***Հոդված 4038.*** Օրենսգրքի 234.7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 234.7. Պատասխանողի գործողությունները հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո**

1. Հայցադիմումի պատասխանը կամ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:»:

***Հոդված 4139.*** Օրենսգրքի 234.9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 234.9. Գործի քննության կարգը**

1. Դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1) դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործին մասնակցող անձանցից ստանալ պարզաբանումներ գործի լուծման համար նշանակություն ունեցող վկայակոչված հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ.

2) ներկայացվել է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն.

3) հայցվորը հրաժարվել է պահանջից:~~.~~

2. Գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:

3. Գործը դատական նիստում քննելու մասին դատարանը կայացնում է որոշում հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետը լրանալուց կամ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

4. Գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:»:

***Հոդված ~~42~~40.*** Օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Վճիռը վերանայելու արդյունքով դատարանը կայացնում է նոր վճիռ, որում շարադրվում է կողմերի հաշտության համաձայնության բառացի շարադրանքը (տեքստը) կամ մերժում է վճռի վերանայումը, ինչի վերաբերյալ կայացնում է որոշում:»:

***Հոդված ~~43~~41.*** Օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետում «հիսնապատիկը» բառը փոխարինել «երկուհարյուրապատիկը» ~~երկուհարյուրհիսնապատիկը~~» բառով:

2) ~~1-ին մասի~~ 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) հայցն ակնհայտ անհիմն է, եթե դրանում ձևակերպված հայցապահանջն ակնհայտորեն ոչ իրավաչափ է (ակնհայտորեն ենթակա է մերժման անկախ դրա հիմքում դրված փաստերից), կամ հայցվորի կողմից դրա հիմքում դրված փաստերի հիման վրա ակնհայտորեն ենթակա է մերժման

կամ ներկայացվել է ոչ պատշաճ հայցվորի կողմից կամ ոչ պատշաճ պատասխանողի դեմ (այսուհետ՝ ակնհայտ անհիմն հայց):»:

***Հոդված 4244.*** Օրենսգրքի 362-րդ հոդվածի 4-րդ մասի «4-րդ մասով» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև 340-րդ հոդվածով» բառերը, իսկ «դեպքում» բառը «դեպքերում» բառով: Օրենսգրքի 362-րդ հոդվածի 4-րդ մասը «4-րդ մասով» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև 340-րդ հոդվածի 3-րդ մասով» բառերով, և «դեպքում» բառը փոխարինել «դեպքերում» բառով:»:

***Հոդված 4345.*** Օրենսգրքի 365-րդ հոդվածում.

1) 2-րդ մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը, որը անհնար է դարձնում բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելը.»:

2) 3-րդ մասում՝ «2-րդ մասի» բառերից հետո լրացնել «1-ին», «5-րդ» բառից հետո «6-րդ,» բառերը, իսկ «և 11-րդ կետերով» բառերը փոխարինել «, 11-րդ և 12-րդ կետերով (բացառությամբ սույն օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքի),» բառերով:

Օրենսգրքի 365-րդ հոդվածի.

1) 2-րդ մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը, որը անհնար է դարձնում բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելը, եթե հնարավոր չէ արձանագրությունը վերականգնել հատուկ համակարգչային ձայնագրման համակարգից.»:

2) 3-րդ մասը՝ «2-րդ մասի» բառերից հետո լրացնել «1-ին», «5-րդ» բառից հետո «6-րդ,» բառերով, իսկ «և 11-րդ կետերով» բառերը փոխարինել «, 11-րդ և 12-րդ կետերով (բացառությամբ սույն օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքի)» բառերով:

***Հոդված 4644.*** Օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Բողոքին կցվում է օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքը վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ համապատասխան գանձապետական հաշվին

փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից, բողոքը գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցները, բացառությամբ հայցադիմումը վերադարձնելու և ընդունումը մերժելու դեպքերի, ինչպես նաև բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցը և վերաքննիչ բողոքի էլեկտրոնային կրիչը:»:

***Հոդված ~~47~~45.*** ~~Օրենսգրքի 371-րդ հոդվածում՝~~

~~1) լրացնել նոր 2.1-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.~~

~~«2.1. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 3.1-րդ մասին համապատասխան Վերաքննիչ դատարանի աշխատակազմի կողմից կազմվում է արձանագրություն վերաքննիչ բողոքում առկա թերությունների մասին, սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետը հաշվարկվում է արձանագրությամբ մատնանշված թերությունները վերացնելու համար սահմանված ժամկետն ավարտվելու օրվան հաջորդող հինգերորդ օրվանից:~~

~~2) 3-րդ մասում «թույլ տրված» բառերից հետո լրացնել «բոլոր» բառը:~~

~~3) լրացնել նոր 3.1, 3.2, 3.3.-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ.~~

~~«3.1. Եթե ներկայացված վերաքննիչ բողոքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բողոք բերող անձը թույլ է տվել սույն հոդվածի 368-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ կետերի խախտումներ կամ բողոքին կցված չէ բողոքը գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցները կամ վերաքննիչ բողոքի էլեկտրոնային կրիչը, Վերաքննիչ դատարանի գրասենյակը կարող է հաղորդակցության միջոցով (առկայության դեպքում) ոչ ուշ քան մինչև համապատասխան դատավարական ժամկետը լրանալուց երեք օր առաջ տեղեկացնել բողոք բերող անձին վերաքննիչ բողոքում առկա թերությունների մասին՝ առաջարկելով եռօրյա ժամկետում վերացնել դրանք: Նման միջոցով տեղեկացման անհնարինության դեպքում Վերաքննիչ դատարանի աշխատակազմի նույն ժամկետում կարող է կազմել վերաքննիչ բողոքում առկա թերությունների մասին արձանագրություն՝ նշելով առկա թերություններն արձանագրությունն ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, վերացնելու անհրաժեշտության մասին: Նշված արձանագրությունը ոչ ուշ, քան կազմման հաջորդ օրն ուղարկվում է բողոք բերող անձին»:~~

~~3.2. Սույն հոդվածի 3.1-րդ մասում նշված թերությունները վերացվելուց հետո Վերաքննիչ դատարանը սույն օրենսգրքի 370-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում, եթե բացակայում են վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժելու հիմքերը կամ վերաքննիչ բողոքը վերադարձնելու այլ հիմքեր:~~

~~3.3. Սույն հոդվածի 3.1-րդ մասում նշված թերությունները չվերացվելու դեպքում Վերաքննիչ դատարանը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին, եթե առկա են վերաքննիչ բողոքը վերադարձնելու այլ հիմքեր:~~

~~4) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.~~

~~«4. Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշում ընդունելու դեպքում բողոք բերած անձին ուղարկվում են վերաքննիչ դատարանի որոշումը, վերաքննիչ բողոքը և դրան կից ներկայացված այն փաստաթղթերը, որոնցում հայտնաբերվել են թերություններ՝ միաժամանակ գործին կցելով դրանց պատճենները: Այդ դեպքում բողոքը բերող անձը բողոքը կրկին ներկայացնելիս դրան չի կցում վերաքննիչ դատարանի կողմից չվերադարձված փաստաթղթերը: Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումն ուղարկվում է նաև գործին մասնակցող այլ անձանց:~~

~~5) լրացնել նոր 5.1-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝~~

~~«5.1. Այն դեպքում, երբ բողոքը ներկայացվել է մի քանի անձանց կողմից Վերաքննիչ դատարանը բողոքում առկա թերություններ թույլ տված անձի համար սահմանում է սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետ՝ այդ թերությունները շտկելու և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու համար:»:~~

«Օրենսգրքի 371-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մաս.

«2.1. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 3.1-ին մասին համապատասխան Վերաքննիչ դատարանի աշխատակազմի կողմից կազմվում է արձանագրություն վերաքննիչ բողոքում առկա թերությունների մասին, սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետը հաշվարկվում է արձանագրությամբ մատնանշված թերությունները վերացնելու համար սահմանված ժամկետն ավարտվելու օրվան հաջորդող հինգերորդ օրվանից:».

2) 3-րդ մասում «թույլ տրված» բառերից հետո լրացնել «բողոք» բառը:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1, 3.2, 3.3.-րդ մասերով.

«3.1. Եթե ներկայացված վերաքննիչ բողոքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բողոք բերող անձը թույլ է տվել սույն հոդվածի 368-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ կետերի խախտումներ կամ բողոքին կցված չէ բողոքը գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցները կամ վերաքննիչ բողոքի էլեկտրոնային կրիչը, Վերաքննիչ դատարանի գրասենյակը կարող է հաղորդակցության միջոցով (առկայության դեպքում) ոչ ուշ քան մինչև համապատասխան դատավարական ժամկետը լրանալուց երեք օր առաջ տեղեկացնել բողոք բերող անձին վերաքննիչ բողոքում առկա թերությունների մասին՝ առաջարկելով մինչև եռօրյա ժամկետում վերացնել դրանք: Նման միջոցով տեղեկացման անհնարինության դեպքում Վերաքննիչ դատարանի գրասենյակը նույն ժամկետում կարող է կազմել վերաքննիչ բողոքում առկա թերությունների մասին արձանագրություն՝ նշելով առկա թերություններն արձանագրությունն ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, վերացնելու անհրաժեշտության մասին: Նշված արձանագրությունը ոչ ուշ, քան կազմման հաջորդ օրն ուղարկվում է բողոք բերող անձին:

3.2. Սույն հոդվածի 3.1-ին մասում նշված թերությունները վերացվելուց հետո Վերաքննիչ դատարանը սույն օրենսգրքի 370-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում, եթե բացակայում են վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժելու հիմքերը կամ վերաքննիչ բողոքը վերադարձնելու այլ հիմքեր:

3.3. Սույն հոդվածի 3.1.-ին մասում նշված թերությունները չվերացվելու կամ վերաքննիչ բողոքը վերադարձնելու այլ հիմքերի առկայության դեպքում Վերաքննիչ դատարանը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին:»:

4) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշում ընդունելու դեպքում բողոք բերած անձին ուղարկվում են վերաքննիչ դատարանի որոշումը, վերաքննիչ բողոքը և դրան կից ներկայացված այն փաստաթղթերը, որոնցում հայտնաբերվել են թերություններ՝ միաժամանակ գործին կցելով դրանց պատճենները: Այդ դեպքում բողոքը բերող անձը բողոքը կրկին ներկայացնելիս դրան չի կցում վերաքննիչ դատարանի կողմից չվերադարձված փաստաթղթերը:

Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումն ուղարկվում է նաև գործին մասնակցող այլ անձանց:»:

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին մասով՝

«5.1. Այն դեպքում, երբ բողոքը ներկայացվել է մի քանի անձանց կողմից Վերաքննիչ դատարանը բողոքում առկա թերություններ թույլ տված անձի համար սահմանում է սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետ՝ այդ թերությունները շտկելու և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու համար:»:

***Հոդված 4846.*** Օրենսգրքի 372-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում լրացնել նոր 1.1-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1) սույն օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում բողոք ներկայացրած անձը բողոքը կրկին ներկայացնելու դեպքում թույլ է տվել նոր խախտումներ.»:

2) 1-ին մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) վերաքննիչ բողոքը բերվել է գույքային պահանջով քաղաքացիական գործով, եթե տվյալ գործով վեճի առարկայի արժեքը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսնապատիկը, բացառությամբ այն դեպքերի, երբ բողոք բերող անձն իր վերաքննիչ բողոքում հիմնավորում է, որ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ.»:

«Օրենսգրքի 372-րդ հոդվածում 1-ին մասը՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետով.

«1.1) սույն օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում բողոք ներկայացրած անձը բողոքը կրկին ներկայացնելու դեպքում թույլ է տվել նոր խախտումներ.»:

2) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) վերաքննիչ բողոքը բերվել է գույքային պահանջով քաղաքացիական գործով, եթե տվյալ գործով վեճի առարկայի արժեքը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը, բացառությամբ այն դեպքերի, երբ բողոք բերող անձն իր վերաքննիչ

բողոքում հիմնավորում է, որ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ.»:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով.

« 8) բողոքը ներկայացվել է սույն օրենսգրքի 26-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված դեպքում.»:

***Հոդված 4947.*** Օրենսգրքի 373-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«***Հոդված 373. Վերաքննիչ վարույթի կարճումը.***

1. Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո մինչև բողոքի քննության ավարտի մասին հայտարարելը վերաքննիչ բողոք բերած անձն իրավունք ունի դիմում ներկայացնելու վերաքննիչ բողոքից հրաժարվելու մասին:

2. Բողոք բերած անձի կողմից վերաքննիչ բողոքից հրաժարվելու դեպքում վերաքննիչ դատարանը կայացնում է վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշում: Եթե դատական ակտը բողոքարկել են նաև այլ անձինք, ապա վարույթը կարճվում է միայն տվյալ բողոքի մասով:

3. Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո սույն օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով վերաքննիչ վարույթը կասեցվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, բողոք բերողին փոխարինելու վերաբերյալ միջնորդություն չներկայացվելու դեպքում վերսկսում է գործի վարույթը և կայացնում է վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշում:

4. Վերաքննիչ վարույթը կարճելու մասին վերաքննիչ դատարանի որոշման հրապարակման պահից առաջին ատյանի դատարանի դատական ակտը մտնում է օրինական ուժի մեջ, եթե այն չեն բողոքարկել այլ անձինք:

5. Վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշումն ուղարկվում է գործին մասնակցող անձանց:

6. Վերաքննիչ դատարանի՝ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված որոշումը կարող է բողոքարկվել Վճռաբեկ դատարան հրապարակման պահից 15 օրյա ժամկետում:

7. Վերաքննիչ վարույթը կարճելու մասին վերաքննիչ դատարանի որոշմամբ վերաքննիչ վարույթի հետ կապված դատական ծախսերը դրվում են վերաքննիչ բողոքից հրաժարված անձի վրա, բացառությամբ սույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասում նշված դեպքերի:»:

***Հոդված 5048.*** Օրենսգրքի 381-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «Վճռի» բառից հետո լրացնել «, այլ եզրափակիչ դատական ակտերի» բառերը:

2) 10-րդ մասում «կայացվող որոշման» բառերից հետո լրացնել «և վերաքննիչ դատարանի այլ միջանկյալ և եզրափակիչ դատական ակտերի» բառերը:

Օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասը «Վճռի» բառից հետո լրացնել «, այլ եզրափակիչ դատական ակտերի» բառերով:»:

***Հոդված 5149.*** Օրենսգրքի 386-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բացառիկ դեպքերում, երբ առկա են դատավորի կամքից անկախ, օբյեկտիվ հանգամանքներ, որոնք անհնար են դարձնում հայտարարված ժամկետում որոշման հրապարակումը, դատարանը կարող է մինչև 15 օրով երկարաձգել որոշման հրապարակման ժամկետը՝ այդ մասին ծանուցելով գործին մասնակցող անձանց:»:

***Հոդված 5250.*** Օրենսգրքի 387-րդ հոդվածի 387-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ նախադասությունում մասը «15 օր հետո» բառերից հետո լրացնել «, բացառությամբ գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին որոշման, ինչպես նաև վերաքննիչ բողոքից հրաժարվելու հիմքով վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշումների» բառերով:

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ պարտատերերի պահանջների հաստատման կապակցությամբ կայացված որոշումների դեմ բերված, ինչպես նաև Գնումների հետ կապված վեճերով կայացված վճիռների դեմ բերված բողոքների քննության արդյունքով, ինչպես նաև բողոքից հրաժարվելու և գործը հաշտության համաձայնությամբ

ավարտելու կապակցությամբ վերաքննիչ դատարանի կայացված որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:»:

3) 3-րդ մասըմասում «կայացման պահից» բառերից հետո լրացնել «, բացառությամբ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման, որը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից 15 օր հետո» բառերով:

***Հոդված 5351.*** Օրենսգրքի 389-րդ հոդվածի 389 րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել նոր 3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1.-ին մասով.

«3) դատավարության մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:».

2) լրացնել նոր 3.1.-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1. Գործին մասնակից չդարձած անձինք վերաքննիչ դատարանի եզրափակիչ դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող են ներկայացնել այն դեպքում, եթե իրենց իրավունքները և պարտականությունները շոշափվել են վերաքննիչ դատարանի եզրափակիչ դատական ակտով:»:

***Հոդված 5254.*** Օրենսգրքի 391-րդ հոդվածը լրացնել՝ հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով. Օրենսգրքի 391 րդ հոդվածում լրացնել նոր 2.1 րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Սույն օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ակտերի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել այդ ակտերի հրապարակման պահից տասնհինգօրյա ժամկետում:»:

***Հոդված 5355.*** Օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում կետի «բերվում են» բառերը փոխարինել «բերվում է» բառերով:

***Հոդված 5456.*** Օրենսգրքի 395-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 393-րդ հոդվածի պահանջներին, վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը,

~~կամ դատարանը մերժել է պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդությունը, կամ վճռաբեկ բողոք է բերվել մեկից ավելի դատական ակտերի դեմ:~~

~~Եթե ներկայացված վճռաբեկ բողոքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բողոք բերող անձը թույլ է տվել սույն օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի խախտումներ կամ բողոքին կցված չէ բողոքը գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցները կամ վճռաբեկ բողոքի էլեկտրոնային կրիչը, Վճռաբեկ դատարանի գրասենյակը կարող է հաղորդակցության միջոցով (առկայության դեպքում) տեղեկացնել բողոք բերող անձին վճռաբեկ բողոքում առկա թերությունների մասին՝ առաջարկելով եռօրյա ժամկետում վերացնել դրանք: Նման միջոցով տեղեկացման անհնարինության դեպքում Վճռաբեկ դատարանի աշխատակազմը նույն ժամկետում կարող է կազմել վճռաբեկ բողոքում առկա թերությունների մասին արձանագրություն՝ նշելով առկա թերություններն արձանագրությունն ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, վերացնելու անհրաժեշտության մասին: Նշված արձանագրությունը ոչ ուշ, քան կազմման հաջորդ օրն ուղարկվում է բողոք բերող անձին:»:~~

~~2) լրացնել նոր 1.1, 1.2, 1.3-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ.~~

~~«1.1. Սույն հոդվածի 1-ին մասում նշված թերությունները վերացվելուց հետո Վճռաբեկ դատարանը սույն օրենսգրքի 394-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում կայացնում է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում, եթե բացակայում են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու հիմքերը կամ վճռաբեկ բողոքը վերադարձնելու այլ հիմքեր:~~

~~1.2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված թերությունները չվերացվելու դեպքում Վճռաբեկ դատարանը սույն օրենսգրքի 395-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին, եթե առկա են վճռաբեկ բողոքը վերադարձնելու այլ հիմքեր:~~

~~1.3. Այն դեպքերում, երբ վճռաբեկ բողոքում առկա թերությունների վերացման համար բողոք բերող անձը չի տեղեկացվում, այդ թվում՝ երբ արձանագրություն չի կազմվում, և վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 393-րդ հոդվածի պահանջներին, վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը, կամ դատարանը մերժել է պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդությունը կամ վճռաբեկ բողոք է բերվել մեկից ավելի դատական ակտերի դեմ, վճռաբեկ բողոքը վերադարձվում է:»:~~

~~2) լրացնել նոր 3.1-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.~~

~~«3.1. Այն դեպքում, երբ բողոքը ներկայացվել է մի քանի անձանց կողմից Վճռաբեկ դատարանը բողոքում առկա թերություններ թույլ տված անձի համար սահմանում է մինչև մեկամսյա ժամկետ՝ այդ թերությունները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:»:~~

Օրենսգրքի 395-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 393-րդ հոդվածի պահանջներին, վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը, կամ դատարանը մերժել է պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդությունը, կամ վճռաբեկ բողոք է բերվել մեկից ավելի դատական ակտերի դեմ:

Եթե ներկայացված վճռաբեկ բողոքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բողոք բերող անձը թույլ է տվել սույն օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի խախտումներ կամ բողոքին կցված չէ բողոքը գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցները կամ վճռաբեկ բողոքի էլեկտրոնային կրիչը, Վճռաբեկ դատարանի գրասենյակը կարող է հաղորդակցության միջոցով (առկայության դեպքում) տեղեկացնել բողոք բերող անձին վճռաբեկ բողոքում առկա թերությունների մասին՝ առաջարկելով եռօրյա ժամկետում վերացնել դրանք: Նման միջոցով տեղեկացման անհնարինության դեպքում Վճռաբեկ դատարանի գրասենյակը նույն ժամկետում կարող է կազմել վճռաբեկ բողոքում առկա թերությունների մասին արձանագրություն՝ նշելով առկա թերություններն արձանագրությունն ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում վերացնելու անհրաժեշտության մասին: Նշված արձանագրությունը ոչ ուշ, քան կազմման հաջորդ օրն ուղարկվում է բողոք բերող անձին:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին, 1.2-րդ, 1.3-րդ մասերով.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասում նշված թերությունները վերացվելուց հետո Վճռաբեկ դատարանը սույն օրենսգրքի 394-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում կայացնում է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում, եթե բացակայում են վճռաբեկ բողոքը վարույթ

ընդունելը մերժելու կամ առանց քննության թողնելու  հիմքերը կամ վճռաբեկ բողոքը վերադարձնելու այլ հիմքեր:

1.2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված թերությունները չվերացվելու կամ վճռաբեկ բողոքը վերադարձնելու այլ հիմքերի առկայության դեպքում Վճռաբեկ դատարանը սույն օրենսգրքի 395-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին:

1.3. Այն դեպքերում, երբ վճռաբեկ բողոքում առկա թերությունների վերացման համար բողոք բերող անձը չի տեղեկացվում, այդ թվում՝ երբ արձանագրություն չի կազմվում, և վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 393-րդ հոդվածի պահանջներին, վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը, կամ դատարանը մերժել է պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդությունը կամ վճռաբեկ բողոք է բերվել մեկից ավելի դատական ակտերի դեմ, վճռաբեկ բողոքը վերադարձվում է:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

«3.1. Այն դեպքում, երբ բողոքը ներկայացվել է մի քանի անձանց կողմից Վճռաբեկ դատարանը բողոքում առկա թերություններ թույլ տված անձի համար սահմանում է մինչև մեկամսյա ժամկետ՝ այդ թերությունները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:»:

***Հոդված 557.*** Օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 7-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով.~~լրացնել նոր 8-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.~~

«8) բողոքը ներկայացվել է նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով ուժի մեջ չմտած դատական ակտի դեմ:»:

***Հոդված 568.*** Օրենսգրքի 406-րդ հոդվածի 5-րդ մասի 8-րդ կետը ~~կետում~~ «բեկանելիս» բառից հետո լրացնել «կամ օրինական ուժի մեջ թողնելիս» բառերով:

***Հոդված 579.*** Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը կետում «տվյալ» բառից հետո լրացնել «կամ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ այլ» բառերով բառերը:

***Հոդված 5860.*** Օրենսգրքի 422-րդ հոդվածի 4-րդ մասը մասում «բողոք բերված լինելու» բառերից հետո լրացնել «կամ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման» բառերովբառերը:

***Հոդված 5961. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ***

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 3-րդ, 12-րդ, 16-րդ և 32-րդ հոդվածներով նախատեսված դրույթները տարածվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վարույթ ընդունված հայցադիմումների քննության վրա:

2. Սույն օրենքի 2-րդ, 10-րդ, 13-րդ և 30-րդ հոդվածներով նախատեսված դրույթները տարածվում են նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վարույթ ընդունված հայցադիմումներով գործերի քննության վրա:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի փետրվարի 9-ի ՀՕ-26-Ն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետը:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-693-30.10.2023-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

| | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| | ***ՀՀ կառավարություն*** | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ** | Վերնագրի «**ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**» բառերը փոխարինել «**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ**» բառերով:<br>Քանի որ Նախագծի 1-ին հոդվածը առաջարկվում է հանել, Նախագծի անվանումը անհրաժեշտ է համապատասխանեցնել կատարվող փոփոխություններին և լրացումներին: | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *ՀՀ կառավարություն* | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված** | Օրենքի նախագծից հանել 1-ին հոդվածը և համապատասխանաբար փոխել հաջորդող հոդվածների համարակալումը:<br>Նախագծի տվյալ հոդվածով առաջարկվող լրացումներն ու փոփոխությունները դատավորների հետ քննարկելու արդյունքում պարզ դարձավ, որ նման կարգավորման նախատեսումը կարող է խեղել արդեն իսկ ձևավորված պրակտիկան և նման լրացման և փոփոխության կարիք ներկայումս չկա: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| | *ՀՀ կառավարություն* | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված** | «Հոդված 26. Ընդդատության և ենթակայության մասին վեճերը» բառերը գրել թավ տառերով:<br><br>Տվյալ փոփոխությունը անհրաժեշտ է հոդվածի վերնագիրը Քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդվածների կառուցվածքի ընդհանուր տրամաբանությանը համապատասխանեցնելու և միատեսակությունը ապահովելու համար: | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ***ՀՀ կառավարություն*** | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մաս** | «2-րդ և 3-րդ» բառերը փոխարինել «1-3-րդ» բառերով<br><br>Նախագծով նախատեսվել է, որ վարչական և հակակոռուպցիոն գործերով դատավորը ենթակայության հարցի որոշման համար գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին կայացված որոշումը ուղարկում է գործին մասնակցող անձանց, ովքեր այն ստանալու պահից եռօրյա ժամկետում կարող են գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:<br>Ազգային ժողովի փորձագիտական և վերլուծական վարչության կողմից առաջարկվել է տվյալ կարգավորումը նախատեսել նաև նույն հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 26-րդ հոդվածի 1-ին մասի՝ սնանկության գործերի վրա:<br>Հաշվի առնելով առաջարկը ընդունելու նպատակահարմարությունը, առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 26-րդ հոդվածի 4-րդ մասի «2-րդ և 3-րդ» բառերը փոխարինել «1-3-րդ» բառերով: | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ***ՀՀ կառավարություն*** | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված** | 6-8-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում՝ Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:<br>7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրվում է նիստ՝ իր, և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:<br>8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:»:<br>Հաշվի առնելով ենթակայության գործերի որոշման կարևորությունը, գտնում ենք, որ առավել նպատակահարմար կլինի, | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | որպեսզի վարչական և հակակոռուպցիոն գործերով ենթակայության վերաբերյալ որոշումները կայացվեն ոչ թե Վճռաբեկ դատարանի և համապատասխան պալատների նախագահների, այլ Վճռաբեկ դատարանի և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ: Ընդ որում՝ տվյալ գործերով որոշումների կայացմանը Վճռաբեկ դատարանի և բոլոր պալատների նախագահների մասնակցությունը պետք է լինի պարտադիր, ուստի անհրաժեշտ է Նախագծի 2-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 26-րդ հոդվածի 6-7-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ:<br>Ինչ վերաբերում է նույն հոդվածի 8-րդ մասին, ապա դրա՝ Նախագծում առկա ձևակերպումը պարզ չէ, ուստի առաջարկվում է այն շարադրել նոր խմբագրությամբ և տվյալ մասի խմբագրությունը հստակեցնել: | | |
| | ***ՀՀ կառավարություն*** | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և** | Լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ մասով. «10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացնելու դեպքում չի կարող | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | **փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածը** | վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով:»:<br>Քանի որ Նախագծով առաջարկվել է վարչական և հակակոռուպցիոն գործերի ենթակայության վերաբերյալ որոշումներն ընդունել Վճռաբեկ դատարանի և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, նշված առաջարկը ընդունելու դեպքում, ստացվում է, որ Վճռաբեկ դատարանի և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ ենթակայության գործերով որոշում ընդունելուց հետո իմաստազուրկ է դառնում նման հիմքով վերաննքիչ դատարան վերաքննիչ բողոք ներկայացնելու հնարավորությունը:<br>ՈՒստի առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 26-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ մասով. | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *ՀՀ կառավարություն* | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածը** | նոր խմբագրությամբ շարադրվող 11-րդ մասի «յոթնօրյա» բառը փոխարինել «տասնօրյա» բառով: Առաջարկվող փոփոխությունը ներկայացվել է Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից՝ դատավորի կողմից հատուկ կարծիք ներկայացնելու և հրապարակելու ժամկետը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված տասնօրյա ժամկետին համապատասխանեցնելու նպատակով: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| | *ՀՀ կառավարություն* | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մաս** | Լրացվող 8-րդ մասի «օրն» բառը փոխարինել « օրը բառով»:<br><br>Տվյալ փոփոխությունը անհրաժեշտ է լրացվող 8-րդ մասի ձևակերպումը հստակեցնելու համար: | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *ՀՀ կառավարություն* | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդված** | «Օրենսգրքի 37-րդ հոդվածը լրացնել նոր 1.1-րդ և 1.2-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.» բառերը փոխարինել «Օրենսգրքի 37-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին և 1.2-րդ մասերով.»:<br><br>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| | | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մաս** | Նոր լրացվող 1.1-ին կետում «Օրենսգրքով» բառը փոխարինել «օրենսգրքով» բառով:<br><br>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| | *ՀՀ կառավարություն* | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ** | «3-րդ մասի առաջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.» բառերը փոխարինել «3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությունով.» բառերով: | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | **կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մաս** | Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն: | | |
| | ***ՀՀ կառավարություն*** | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մաս** | «7.1.-րդ» բառը փոխարինել «7.1.-ին» բառով<br><br>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| | ***ՀՀ կառավարություն*** | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդված** | Օրենքի նախագծից հանել 8-րդ հոդվածը և համապատասխանաբար փոխել հաջորդող հոդվածների համարակալումը:<br>Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի հետ քննարկման արդյունքում պարզ դարձավ, որ տվյալ փոփոխության անհրաժեշտությունը բացակայում է: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| | ***ՀՀ կառավարություն*** | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում** | «մասում» բառը փոխարինել «մասի» բառով.<br><br>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | **լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդված** | իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն: | | |
| | *ՀՀ կառավարություն* | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդված** | «մասում» բառը փոխարինել «մասը» բառով և «բառերից» բառը փոխարինել «բառից» բառով.<br><br>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| | *ՀՀ կառավարություն* | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 11-րդ հոդված** | «մասում» բառը փոխարինել «մասը» բառով և «բառերը» բառը փոխարինել «բառերով» բառով.<br><br>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| | *ՀՀ կառավարություն* | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական** | 1) «Օրենսգրքի 97-րդ հոդվածը լրացնել նոր 4.1-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.» բառերը փոխարինել «Օրենսգրքի 97-րդ | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | **դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 12-րդ հոդվածում** | հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին մասով.» բառերով<br>2) լրացվող 4.1.-ին մասը «Դատական ծանուցագիրը հեռախոսակապի» բառերից հետո լրացնել «(այդ թվում՝ տեքստային հաղորդագրության)» բառերով:<br>3) լրացվող 4.1.-ին մասով «տրամադրել իր հեռախոսահամարը» բառերից հետո լրացնել « կամ էլեկտրոնային հասցեն», իսկ «Այդ դեպքում նշված հեռախոսահամարին» բառերից հետո լրացնել «կամ էլեկտրոնային հասցեին» բառերը:<br>4) լրացվող 4.1.-ին մասում « «կցվում են գործին» բառերից հետո լրացնել «:» նշանը:<br><br>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն, ինչպես նաև ծանուցման ուղարկման եղանակները հստակեցնելուն: | | |
| | ***ՀՀ կառավարություն*** | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և** | Օրենքի նախագծից հանել 14-րդ հոդվածը և համապատասխանաբար փոխել հաջորդող հոդվածների համարակալումը:<br>Քանի որ Օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Վճարված | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | **փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 14-րդ հոդված** | պետական տուրքի վերադարձման հիմքերը և կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:», առաջարկում ենք Նախագծից հանել 14-րդ հոդվածով առաջարկվող լրացումը և հոդվածների համարակալումը համապատասխանեցնել ըստ դրա: | | |
| | ***ՀՀ կառավարություն*** | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 16-րդ հոդված** | Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օրենսգրքի 109-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մասով.<br>«9. Ներկայացված առանձին հայցապահանջների նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու հիմքերի առկայության դեպքում, եթե դատարանն այդ մասով առանձնացնում է գործի վարույթը և առանձնացված մասով կայացնում է հայցը մերժելու մասին վճիռ, ապա նշված վճռում դատարանը կարող է նշում կատարել դատական ծախսերի հարցին առանձնացված գործով կայացվելիք եզրափակիչ դատական ակտով անդրադառնալու մասին:»:<br><br>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն: | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *ՀՀ կառավարություն* | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 17-րդ հոդված** | «անդրադառնալ» բառը փոխարինել «անդրադառնալու» բառով: Առաջարկվող փոփոխությունն ուղղված է տվյալ ձևակերպումը հայերենի կանոններին համապատասխանեցնելուն | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| | *ՀՀ կառավարություն* | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 18-րդ հոդված** | Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին մասում «Առաջին ատյանի դատարանը» բառերը փոխարինել «Դատարանը» բառով:<br><br>Հիմք ընդունելով Ազգային ժողովի փորձագիտական և վերլուծական վարչության կողմից ներկայացված դիտարկումները, մասնավորապես՝ 12-րդ կետը, համաձայն որի վերոնշյալ իրավակարգավորումը չի բացահայտում բացառիկ դեպքերի բովանդակությունը և կարող է հանգեցնել տարաբնույթ մեկնաբանման և խնդրահարույց լինել իրավական որոշակիության տեսանկյունից, առաջարկում ենք նախագծից հանել այն: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *ՀՀ կառավարություն* | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 19-րդ հոդված** | «մասի 1-ին նախադասության» բառերը փոխարինել «մասը»<br><br>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| | *ՀՀ կառավարություն* | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 20-րդ հոդված** | Շարադրել հետյալ խմբագրությամբ. «Օրենսգրքի 127-րդ հոդվածում՝<br>1) 1-ին մասի՝<br>ա.10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.<br>«10) հակընդդեմ հայցադիմումը չի համապատասխանում սույն օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին կամ 3-րդ մասով սահմանված պահանջներին.»:<br>բ.12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.«12) վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձը հայցադիմումը ներկայացրել է սույն օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին, 1.1.-ին և 1.2-րդ մասերով սահմանված պահանջների խախտմամբ.».<br>գ. 14-րդ կետը շարադրել հետևյալ | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | խմբագրությամբ.<br>«14) հայցադիմումը ներկայացվել է այն ներկայացնելու օրվա դրությամբ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցող գումարի բռնագանձման պահանջով, որը ենթակա է քննության նոտարի կողմից, և առկա չէ<br>ա. նոտարի կողմից նույն պահանջով գումարի բռնագանձման կարգադրություն արձակվելու վերաբերյալ դիմումըմերժելու մասին որոշում, բացառությամբ «Նոտարիատի մասին» օրենքի 82.9-րդ հոդվածի 1.1.-ին մասով նախատեսված հիմքով դիմումը մերժելու դեպքի կամ,<br>բ. նոտարի կողմից նույն պահանջով կարգադրությունը չեղյալ ճանաչվելու վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշում։».<br>2) 1.3.-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.<br>«1.3. Սույն հոդվածի 1.1-ին մասում նշված թերությունները չվերացվելու կամ հայցադիմումը վերադարձնելու այլ հիմքերի առկայության դեպքում առաջին ատյանի դատարանը սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | որոշում է կայացնում հայցադիմումը վերադարձնելու մասին:». <br> 3)4-րդ մասի՝ <br> ա. «և 10-12-րդ» բառերը փոխարինել « 10-12-րդ և 14-րդ» բառերով. <br> բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ. <br> «Կրկին ներկայացված հայցադիմումում նույն խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ խախտումները վերացնելու հնարավորությունից հայցվորը զրկված էր իր կամքից անկախ պատճառներով:»: <br> 4) 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությունով. <br> «Եթե հայցադիմումը վերադարձնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը բողոքարկված լինելու պայմաններում հայցադիմումը կրկին ներկայացվել է դատարան, ապա առաջին ատյանի դատարանը կրկին ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու հարցի վերաբերյալ որոշում է կայացնում վերաքննիչ դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելու | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մասին առաջին ատյանի դատարանի որոշման վերաբերյալ դատական ակտ կայացնելուց հետո:»:<br>5) 6-րդ մասը 1-ին նախադասության «մերժելու հիմքերը» բառերից հետո լրացնել «, իսկ սույն Օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված անվերապահ բեկանման հիմքերից որևէ մեկով հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը վերացվելու դեպքերում առաջին ատյանի դատարանը հայցադիմումն ընդունում է վարույթ, եթե բացակայում են հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը» բառերով:»:<br><br>Սույն հոդվածում կատարվող փոփոխությունները և լրացումները ուղղված են ապահովելու Ազգային ժողովի փորձագիտական և վերլուծական վարչության կողմից ներկայացված դիտարկումների ընդունումը,<br>սույն առաջարկություններով ներկայացվող «Նոտարիատի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ նախատեսող օրենքի նախագծի կարգավորումներին և հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | պահանջներին համապատասխանեցնելուն: | | |
| | ***ՀՀ կառավարություն*** | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 21-րդ հոդված** | «մասում» բառը փոխարինել «մասը» բառով.<br><br>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն: | Ընդունվել է | Ընդունվել է: |
| | ***ՀՀ կառավարություն*** | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 22-րդ հոդված** | Շարադրել հետևյալ խմբագրությամբ.<br>Օրենսգրքի 131-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին մասով.<br>«5.1. Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելուց հետո ներկայացվելու և դատարանի կողմից բավարարվելու դեպքում՝ հայցի ապահովման միջոց կիրառելու կամ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մասնակի բավարարելու մասին դատարանի որոշումը ուղարկվում է պատասխանողին և գործին | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մասնակցող այլ անձանց հայցի ապահովման մասին դատարանի որոշումը կատարելուց հետո՝ եռօրյա ժամկետում:»:<br><br>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն և տվյալ լրացումը, ըստ իր բովանդակության, համապատասխան հոդվածում կատարելուն: | | |
| | ***ՀՀ կառավարություն*** | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 23-րդ հոդված** | «կետում» բառը փոխարինել «կետը» բառով և «,» նշանը փոխարինել «:» նշանով:<br><br>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| | ***ՀՀ կառավարություն*** | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ** | «Օրենսգրքի 135-րդ հոդվածի 6-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.» բառերը փոխարինել «Օրենսգրքի 135-րդ հոդվածի 6-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությունով.» բառերով: | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | **կատարելու մասին» օրենքի նախագծի 24-րդ հոդված** | Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն: | | |
| | *ՀՀ կառավարություն* | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 25-րդ հոդված** | «բառերը» բառը փոխարինել « բառերով» բառով:<br><br>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| | *ՀՀ կառավարություն* | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ** | Հանված հոդվածների համարակալմանը համապատասխան Օրենքի նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ 24-րդ հոդվածով. «<br>**Հոդված 24.** Օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասը «հետևանքները» բառից հետո լրացնել «բացառությամբ սույն օրենսգրքի 183-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերի» բառերով:»<br>Հիմք ընդունելով Ազգային ժողովի փորձագիտական և վերլուծական | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | վարչության եզրակացության 26-րդ կետով ներկայացված առաջարկությունը համաձայն որի Նախագծի 37-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսվող Օրենսգրքի 183-րդ հոդվածում լրացվող 10-րդ մասը նախատեսում է Օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասից տարբերվող կարգավորումներ, առաջարկում ենք Նախագծի 37-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսվող Օրենսգրքի 183-րդ հոդվածում նոր լրացվող 10-րդ մասի և Օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը ապահովելու համար Նախագիծը լրացնել նոր հոդվածով՝ հոդվածների համարակալումը համապատասխանեցնելով առաջարկվող փոփոխություններին: | | |
| | ***ՀՀ կառավարություն*** | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 26-րդ հոդված** | 1) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) 5-րդ մասի՝ ա. «օրենսգրքի» բառը փոխարինել «հոդվածի» բառով. բ. «չի քննարկվում» բառերից հետո լրացնել «, որի մասին միջնորդությունը ներկայացրած անձը տեղեկացվում է ոչ ուշ, քան հաջորդ օրը:» բառերը: 2) 2-րդ կետի «գ» ենթակետից հանել «երկրորդ նախադասության» բառերը և « հաջորդ օրը» բառերից | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հետո լրացնել « » բառերը» բառերը:<br><br>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն: | | |
| | *ՀՀ կառավարություն* | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 27-րդ հոդված** | Օրենսգրքի 153-րդ հոդվածի 3-րդ մասի լրացվող 2-րդ նախադասության «հնարավորության դեպքում» բառերը հանել և «ներկայությամբ» բառից հետո լրացնել «, եթե առկա է դրա հնարավորությունը,» բառերը:<br><br>Առաջարկվող փոփոխությունն ուղղված է հոդվածի ձևակերպումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխանեցնելուն և կարգավորման հստակությանը ապահովելուն: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| | *ՀՀ կառավարություն* | **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու** | Շարադրել հետևյալ խմբագրությամբ.<br>«Օրենսգրքի 156-րդ հոդվածի<br>1) 1-ին մասի՝<br>ա) 6-րդ կետի «պատասխանողը» բառը փոխարինել «գործին մասնակցող անձը» բառերով.<br>բ) 10-րդ կետը շարադրել | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | **մասին» օրենքի նախագծի 28-րդ հոդված** | հետևյալ խմբագրությամբ. «10) առաջին ատյանի դատարանը որոշել է գործի քննությանը ներգրավել գործին մասնակցող նոր անձի կամ սույն Օրենսգրքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ծանուցել որևէ անձի.». գ) 14-րդ կետի «դեպքում» բառը փոխարինել «կամ սույն Օրենսգրքով սահմանված դատավարական գործողությունները կատարելու անհրաժեշտության դեպքերում» բառերով. 2) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ. «Սույն հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքում գործի քննությունը հետաձգելու գործողությունը կարող է կատարվել դատական նիստից դուրս»:<br><br>11) Հիմք ընդունելով Ազգային ժողովի փորձագիտական և վերլուծական վարչության եզրակացության 18-րդ կետը, համաձայն որի Նախագծի 28-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսվող Օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում նախատեսվող լրացումը առաջարկվում է կատարել նույն հոդվածի 2-րդ մասում, քանզի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասը նվիրված է դատական նիստի հետաձգման հիմքերի սահմանմանը, իսկ Նախագծի 28-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսվող Օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում նախատեսվող լրացումը իր էությամբ դատական նիստի հետաձգման կարգին վերաբերող կարգավորում է, որն առավել նպատակահարմար է կատարել Օրենսգրքի 156-րդ հոդվածի 2-րդ մասում, առաջարկում ենք Նախագծի 28-րդ հոդվածով փոփոխվող 156-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսվող լրացումը կատարել Օրենսգրքի 156-րդ հոդվածի 2-րդ մասում՝ հետևյալ բովանդակությամբ «Սույն հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքում գործի քննությունը հետաձգելու գործողությունը կարող է կատարվել դատական նիստից դուրս»: | | |
